Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Աւստրօ-Ունգարիա. Ֆրանսիա. Անգլիա. Նամակ Թիւրքիայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԳԱՂԱՓԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 27 հոկտեմբերի

«Մշակ» լրագրի 196 համարում կարդացի պ. բժիշկ Աւետամեանցի նամակը, որով նա ապացուցանում է՝ թէ որչափ վնասակար ազդեցութիւն է ունենում յաջորդ սերունդի վրա, երբ վաղօրօք, հասակ չառած մատաղ օրիորդներին Ղարաբաղում ամուսնացնում են չափահաս 35 տարեկան երկաթակազմ տղամարդերի հետ: Սրա վրա յարգելի պարոնը աւելացնում է, որ Ղարաբաղում ծնողները իրանց աղջիկներին բռնութեամբ 13 տարեկան հասակում, որոնցից մի երկու տարի էլ չարչարեմբեամբ աւելացնում են, ուրեմն 11 տարեկան ժամանակը, տալիս են մարդի իրանց կխիցը չուտ ուտ անելու համար, իսկ վայրենի ամուսինը աշխատում է, որքան կարելի է քնքոյշ հասակի մատաղահաս նապաստիկը դանել իր անասնական կրքերի համար:

Ըզ ցոյց տալով մինչև անգամ բռնաւութիւնները, պարոնը ասում է, որ այդ ախտը ընդհանրացել է Ղարաբաղում, և վերջ ի վերջոյ զարաբաղցիներից դուրս է քերում մի այնպիսի վայրենի ու բարբարոս ժողովուրդ, որ ճշմարիտ ասած մինչև օրս չեմ հանդիպած: Այդ ծայրայեղութեամբ լի նամակը չատ վատ ազդեցութիւն ունեցաւ ինձ վրա, առաւել ևս որ դա մի երիտասարդ բժշկի, ուրիշ խօսքով ասած՝ ուսումնականի գրչի ծնունդ էր:

Դուք, պ. խմբագիր, անշուշտ ճանօթ էք զարաբաղցիներին. նրանցից չատերը քնակում են Թիֆլիսում և պարապվում են. վաճառականութեամբ, արքունի ծառայութեան մէջ, վարժարեամբ, բժշկականութեամբ և կան ևս ուսանողներ, որոնք սովորում են տեղոյս դիմնադիաններում: Դրանք, պէտք է ասած, քաջասղջ կազմուածքի մարդիկ են, մի և նոյն ժամանակ ընդունակ և աշխատող: Դրա համար մենք պարտական ենք մեր ծնողներին, մանաւանդ մայրերին, որոնք երբէք չեն խոյս տայ, որ իրանց նորածին մանկան համար ծծմայր վարձեն. մօր կաթով և առողջ օդով սնոդված երեխայից, յառաջանում է առողջ և ընդունակ սերունդ: Իմ կարծիքով միայնակ մի երկիր է ճնացել ամբողջ Հայաստանում, որի բնակիչները առողջակազմ են, բարձրահասակ և միմեանց նման: Այդ իրողութեան մենք պարտական ենք այն բարեկեցիկ պայմաններին, որոնց մէջ ամուսնանում են Ղարաբաղում: Ահա պայմանները. 1) ղարաբաղցի տղամարդը ըստ մեծի մասամբ պըսակվում է մինչև 25 տարեկան հասակը առնելը, 2) ամուսնանում է մի այնպիսի օրիորդի հետ, որ 15—18 տարեկան է և 3) նորածին մանկան միշտ ծիծ է տալի իր հարազատ մայրը, ուրեմն հէնց այդ պայմաններն են, որք արտաքերում են մի առողջ և ընդունակ սերունդ: Շատ պարզ բան է՝ մի 11 տարեկան կիսամարդ զաւակ ծնելուց յետոյ, չէ կարող կաթ ունենալ և երբ նա ամուսնացած է մի 35 տարեկան տղամարդի հետ և այդքան մեծ զանազանութիւնը հասակների մէջ, մեծ ազդեցութիւն պիտի ունենայ զաւակների հիւանդոտ լինելու վրա, ուրեմն այդ հիւանդոտ երեխան, որ զուրկ է մայրական կաթից բնչով է մեծանում, քանի որ այնտեղ ծծմայր վարձել սովորութիւն չէ և եթէ ցանկանան էլ վարձելու, նրանց ճարելը անկարելի է, ուրեմն չատ բնական է, որ նոր սերունդը կամ պիտի փչանայ և կամ եթէ մայրը ունենայ չափազանց կաթ և նորանով կերակրէ երեխային, այս վերջինս պիտի լինի հիւանդոտ, բայց ամենքը կարող են հաստատել, որ Ղարաբաղի մանուկները չատ առողջ են և հիւանդոտ երեխաների թիւը այնտեղ չատ քիչ է:

Այս իմ քոլոր ասածներից կարելի է եզրափակել, որ Ղարաբաղում ամուսնանալը չէ լինում այն պայմանների մէջ ինչպէս ապացուցանում է բժ. Աւետամեանցը:

Այս ասելով ևս քոլորովին չը պիտի ուրանամ, որ երբէք Ղարաբաղում 13 տարեկան աղջիկներ մարդու չեն տալի. պատահում է, բայց դրանք բացառութիւն են կազմում: Օրինակի համար ես յիշում եմ, որ մի 13 տարեկան օրիորդ Թառումեանց պսակվեց 4-ի հետ, մի դիւղացի երիտասարդ Տէր-Ղուկասեանց պսակվեց մի Նաճախանց օրիորդի հետ, որը 12 տարեկան էր: Այսպէս օրինակներ պատահում են ամեն տեղ. անցեալ տարի Թիֆլիսում մի երիտասարդ Դանիէլբէկեանց պսակվեց Թօխաթեանց օրիորդի հետ, որ միայն 12 տարեկան էր:

Գալով այն բարբարոսութեան ու վայրենութեան վրա, որոնց աւազանում մկրտել է պ. բժիշկը ամբողջ ղարաբաղցիներին, ընտանեկան կեանքի վերաբերութեամբ, ես ճշմարիտ ասած ցաւում եմ ոչ թէ ղարաբաղցիների անկարգութեանց վրա, որոնց բոլորովին ընդունակ չեմ համարում այդ տեսակ կեղտոտութեան, այլ ցաւում եմ, որ մի մարդ, լինելով մի քանի անձինքներից անբաւական, նա ընդհանուրին ըսկսում է ցեխոտել չատ թեթևով ոչ մի ապացոյցով:

Ղարաբաղցիների մէջ կան՝ ինչպէս վերև ասացի, վաճառականներ, արուեստաւորներ և վերջապէս ուսումնականներ, որոնք ընտանեկան կեանքի նչանակութիւնը պ. բժշկից պակաս չեն հասկանում և որոնք վայելում են այդ կեանքի քաղցրութիւնը ու սէրը, բայց առանց ամենայն քննութեան անուանել նրանց բարբարոս, բռնակալ, վայրենի, գազան և այլն,—այդ պատիւ չէ բերում մի մարդու, որ ուսումնականների չարքում պիտի համարվէր:

Վերջապէս ես հերքում եմ նամակագրի և այն ասածները, որ իբր թէ զարաբաղցին հայրը բարբարոս է դէպի իրան մատաղ կինը որը ազջիկ ծնանելուց պատրաստ է իր նորածին զաւակին խեղդել, ոչ թէ նրա համար որ նա զուրկ է մայրական զգացմունքից, այլ դրա պատճառը տղամարդն է, ասում է պ. բժիշկը, այն տղամարդը, որ մնծացած է պարսիկների մարակի տակ և թէ վայ այն կնոջ, որ աղջիկ-մանուկ ծնաց. ամեն օր, ամեն գիշեր նրա երեսը քոք ու մուր պէտք է դոյ և այլն: Այդ կարծիքների համար կարող եմ ասել՝ նախ՝ որ ոչ մի տեղ աղջիկները այնքան հնչատ չեն ամուսնանում, ինչքան Ղարաբաղում և նրանց օգուտը անտեսական մէջ չատ մեծ է, ուրեմն նրանք ծանրութիւն չեն իրանց ծնողներին և որանք պատճառ չունեն չարչարանքի ենթարկել իրանց կանանց, որ նրանք աղջիկներ են ծնում և վերջապէս կինը միթէ որ և իցէ բանում մեղք ունի, երբ նա աղջիկ զաւակ է բերում: Պ. բժիշկը թող մտաբերէ թէ որպիսի սրտաուչ տեսարան է լինում, երբ որ Ղարաբաղի նորահարսը հօր տանից դուրս են բերում ու սկսում են տանել փեսայի տունը, ինչպիսի արտասուք են թափում նրա ծնողները և հարազատ տունը դառնում է մեռելատուն. բայց այդ տեսակ տեսարաններ դուք երբէք չէք տեսած ծնողաց գորովանքը դէպի իրանց աղջիկ զաւակները: Եւ երկրորդ չը գիտեմ պարսիկների մարակի վերաբերութեամբ պ. բժիշկը որ սերունդի համար է խօսում. թէ նեղակաց սերունդի վրա է ասելիքը, թող նա բացատրէ. ովքեր են մնծացել պարսիկների մարակների տակ. ես, ինքը, մեր ընկերներ լսեցի պատրիարքից, որ աւելի արժան կը դատեմ, որ դա գրվի առանձին դրքոյկ մի ազնիւ մարդու ձեռքով, ինչպէս մի հայ կըրկեսյ բարեպաշտութեան և քաջահռչակութեան վէպ, քան թէ կցկտուր կերպով մի քանի խօսք ասեմ ես այստեղ: վ. ամենայ կը բաւականանամ ասել մի քանի տպաւորական բաներ հաղորդել ձեզ իմ այս այցելութիւնից, որի ժամանակ բոլորովին իրաւացի զարմացմամբ նկատեց ֆրանսիացի ընդհակիրճը. «Est-ce qu'il y a aussi des dames missionnaires chez les arméniens et toutes ressemblent-elles à celle-ci?» — «չի հարկէ սա առաջինը չէ, որ տեսնում էք, ասեցի, եթէ այսպիսի միսիոնարներ չը լինէին հայոց մէջ, միթէ հայ ազգի անունը կը լինէր մինչև հիմայ աշխարհս երեսին.—Jétais loin de m'attendre à cela, ասեց խեղճ միամիտ եւրոպացին, էլ չիմանալով թէ ինչ դժոխք էր սրբատես մէջ, երբ լեզուս փառաբանում էր հայ ազգի ընդհանուր անձնուիրութիւնը...

Մայրապետը էլ չը գիտէր թէ ինչպէս յայտնէր իր երախտագիտութիւնը, տեսնելով իր բարեպաշտութեան տան մէջ առաջին անգամ երկու սրտակից և համակրող հերս.—«Աղբայրս, տես թէ ինչ նեղութիւնների մէջ են սրտիկս, տես թէ ննջարանը ինչպէս փլած է, որի մէջ թաթանդիկ քամի լինելով երկու ամենափոքրիկ որբերս ծանրագոյն հիւանդացած են, տես թէ... տես թէ...» Ահնչափ տպաւորիչ բաներ սկսեց նկարագրել և յիշատակել, որ մեացի արիւնս ցամաքած.—«Մայրապետ, այդ ամենը նթէ յայտնվի այսպիսի մի հազուագիւտ հերսի առաջ, չատ ամօթ կը լինի ոչ միայն ձեզ և ինձ, այլ ևս բոլոր հայերի պատուին, վասնորոյ ի սէր Աստուծոյ, դուք գրագետէք այստեղ հերսին մինչև որ ես միայնակ կը պատեմ և կը տեսնեմ բոլորը: Հետս առայ դեռատես որբերից երկուսին ու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 22 հոկտեմբերի

Երէկ ոչ առաջի օրը, որ կիրակի օր էր, պատահեց անցնել դարձեալ Խաս-քէօյի կողմերը. մի նորաեկ եւրոպացի թղթակից խնդրեց ընկերակցել պատրիարքի մօտ, պարտաւորութիւն համարեցի այդ օրը զոհել նրան: Հանգիստ և խաղաղ եղանակով մակոյկ նստեցինք Պերայի տակ, կասիմ-փաշա ասված նաւամատոյցի վրա ու ցոյց տուինք Թիւաարին Խաս-քէօյի ուղղութիւնը: Ոակնդիւրի երկու եղերքն էլ յափշտակում էին եւրոպացու ուշքը. «այս ինչ գմայլիչ չէնք է, այն ինչ բարձր կոթող է, այս ինչ գեղեցիկ զրահաւորներ են» բացականչում էր անդադար հարցասէր ֆրանսիացին: Որչափ գիտէի բացատրում էի, ասելով. «սա ծովային նախարարութիւն է, ուր տեղի ունեցաւ պատերազմից առաջ եւրոպական դեսպանաժողովը. սա էլ, որ կերևայ այստեղից այգուի մօտ հեռաւորութեամբ, որ միայն մեր աչքին մօտ կերևայ, դա Գալաթայի աշտարակն է, որ շինված է գէնուէզցոց ձեռքով և որի մէջ պաշտպանվեց վերջին յունաց թագաւոր Կոնստանտինը. սա էլ, որ կը բարձրանայ այսչափ շքեղ կերպով մեր ձախ կողմը, սա էլ յունաց աստղաբաշխական դիտարանն է, որ շինված է յունաց ազգային հաշուով «Ցանաար» կոչվող թաղի մէջ» և այլն: Վերջապէս կանգնեցինք Խաս-քէօյի Նաւամատոյցի կչռին.—«Ո՛, ինչ ազգաս թաղ է» դուրս թռաւ եւրոպացու բերանից.—«Սա է այն հռչակաւոր մարդու ծնած և բնակվող տեղը, որի մօտ կերթանք» ասեցի խուլ ձայնով, էլ չը կարողանալով զսպել մաղձս կ. Պոլսի հարուստ հայերի անպիտանութեան վրա:

Պատրիարքի բնակարան տանող փողոցները այնչափ ոլոր մոլոր, նեղ և ծուռ ու մուռ էին, որ սխալվելով ինքներս էլ սկսեցինք մոլորվիլ. վերջապէս հայոց եկեղեցին նչանակէտ ընտրելով, սկսեցինք բարձրանալ. առաջներս դուրս եկաւ յանկարծ մայրապետ Սրբուհի Գալֆայեան, որը կ. Պոլսի ամբողջ երկու հարիւր յիսուն հազար հայ բնակիչների մէջ իր հինգած միակ օրթանոցի հակոզն է և խնամողը. այդ արի հայ բարեբարուհու պատկերը տպված էր, կարծեմ «Փարոս Հայաստանի» վերջընթեր համարի մէջ:—«Լաւ ձեռքս ընկաք» ասեց բազմաչխատ հայ բարեբարուհին ու առանց դէս ու դէնի բռնեց տարաւ մեզ իր հռչակաւոր որբանոցը, որը տեսնելու փափագը վաղուց արդէն ունէի.—«Սա է պատրիարքարանը» հարցրեց ապշած ֆրանսիացին:—«Cést un orphélinat» նկատեցի. Նա իսկոյն հասկացաւ, որ սա ճանապարհի մոլորութեան մի չը նախատեսած հաճելի դէպք է իր հետաքրքրութեան համար, վասնորոյ շատ ուրախացաւ: Հիմայ գանք մեր տեսածին:

Որբանոցը հիմնողը և մօտ տասնուհինգ տարի խնամողը, ինչպէս ասեցի, մայրապետ Սրբուհի Գալֆայեանն է, որը լինելով մի շատ լաւ ընտանիքի աղջիկ և բնութիւնից շատ առատ գեղեցկութեամբ զարդարված, իր ամենաթարմ տարիքի մէջ պատահում է մի խստագլուխ և մեծ պաշտօնների համար կոչված մարդուն, որի առաքելական դիմիքի խօսքը փոխում է հայ էլօիզի փափուկ սիրտը և նուիրել է տալիս նորան մի բարեպաշտ ու մարդասէր գործունէութեան: Այդ մարդը լինում է նա, որը կոչված է լինում նախախնամութիւնից հայ ազգի կեանքը նորոգելու և ապագան վերականգնելու համար. դա լինում է Ներսէս պատրիարքը: Սրբուհի Գալֆայեանը թափանցում է այն հարիւրաւոր դեռատիպիճ հայ որբերի վիճակի մէջ, որոնց ծնողքը Հայաստանից կ. Պոլիս գաղթելով զանազան տաժան աշխատութիւնների համար, մնում են այստեղ և իրանց զաւակներին թողնում են գոհ կեանքի կատաղի ալիքների և ապականութեանց ձեռքին: Սրբուհի Գալֆայեանը լսում է, ինչպէս հարիւրաւոր հայ աղջիկներ անտէր անտիրական մնալով դեռ. 6—7 տարեկան հասակի մէջ վաճառվում են ձեռքից ձեռք, տանից տուն մարդկանց անարատութեան և անխղճութեան համար մի ժամանակ անպատրաստ գերի լինելու համար, գերի, որի համար չը կայ ոչ մարդկային կեանք, ոչ օր, ոչ լոյս... Օրիորդ Գալֆայեանի մարտաւէրը և մտատանջութիւնը իր բոլոր կեանքը այս գոհերի փրկութեանը նուիրելու համար, այո, լինում է շատ բուռը. ծնողաց կողմից դրած խոչնդոտները, ընկերակիցների օրինակի հրապոյրը, հասարակաց կարծիքի խստութիւնը—այս ամենը այնպիսի գժուարութիւններ են լինում, որոնց վրայից անցնելու և արհամարհելու համար, հարկաւոր է լինում ունենալ մեծ կամք և մեծ հոգի. և այդ ամենը տալիս է անօգնական որբերի ցերը հայ առաքելուհին. Նա փչրում է իր բոլոր աշխարային ապագրերը ու ձեռնարկում է որբանոցի հաստատման, ունենալով իր հետ Ներսէս պատրիարքի նման առաքելների խրախոյսը և ջատագովութիւնը:

Թէ ինչ գերմարդկային աշխատութիւններով և չարչարանքներով է կարողանում տասն ու հինգ տարվայ ընթացքում հարիւր յիսուն փոքրիկ որբ աղջիկներ մեծացնել, կրթել, անարատութիւն ու արուեստ սովորացնելով կարգել ամենազատկատարի մարդիկների հետ, մայր ու հայ վարժարանների դաստիարակուհի պատրաստել, այդ մասին այնպիսի տպաւորութիւններ լսեցի պատրիարքից, որ աւելի արժան կը դատեմ, որ դա գրվի առանձին դրքոյկ մի ազնիւ մարդու ձեռքով, ինչպէս մի հայ կըրկեսյ բարեպաշտութեան և քաջահռչակութեան վէպ, քան թէ կցկտուր կերպով մի քանի խօսք ասեմ ես այստեղ: վ. ամենայ կը բաւականանամ ասել մի քանի տպաւորական բաներ հաղորդել ձեզ իմ այս այցելութիւնից, որի ժամանակ բոլորովին իրաւացի զարմացմամբ նկատեց ֆրանսիացի ընդհակիրճը. «Est-ce qu'il y a aussi des dames missionnaires chez les arméniens et toutes ressemblent-elles à celle-ci?» — «չի հարկէ սա առաջինը չէ, որ տեսնում էք, ասեցի, եթէ այսպիսի միսիոնարներ չը լինէին հայոց մէջ, միթէ հայ ազգի անունը կը լինէր մինչև հիմայ աշխարհս երեսին.—Jétais loin de m'attendre à cela, ասեց խեղճ միամիտ եւրոպացին, էլ չիմանալով թէ ինչ դժոխք էր սրբատես մէջ, երբ լեզուս փառաբանում էր հայ ազգի ընդհանուր անձնուիրութիւնը...

Մայրապետը էլ չը գիտէր թէ ինչպէս յայտնէր իր երախտագիտութիւնը, տեսնելով իր բարեպաշտութեան տան մէջ առաջին անգամ երկու սրտակից և համակրող հերս.—«Աղբայրս, տես թէ ինչ նեղութիւնների մէջ են սրտիկս, տես թէ ննջարանը ինչպէս փլած է, որի մէջ թաթանդիկ քամի լինելով երկու ամենափոքրիկ որբերս ծանրագոյն հիւանդացած են, տես թէ... տես թէ...» Ահնչափ տպաւորիչ բաներ սկսեց նկարագրել և յիշատակել, որ մեացի արիւնս ցամաքած.—«Մայրապետ, այդ ամենը նթէ յայտնվի այսպիսի մի հազուագիւտ հերսի առաջ, չատ ամօթ կը լինի ոչ միայն ձեզ և ինձ, այլ ևս բոլոր հայերի պատուին, վասնորոյ ի սէր Աստուծոյ, դուք գրագետէք այստեղ հերսին մինչև որ ես միայնակ կը պատեմ և կը տեսնեմ բոլորը: Հետս առայ դեռատես որբերից երկուսին ու

Fonds A.R.A.M

նները և վերջապէս մեր հայրերը. պարզ բան է որ ոչ, ուրեմն այդ ֆրազներ են, որ դարաբաղցու ասածի պէս բժիշկը «բնց ա Թողալ». բայց թէ անցեալ սերունդի համար է խօսում, կարծում եմ որ մեռելներին հարկաւոր էր հանգիստ Թողնել։ Նրանք որ պատկվել են մատաղ աղջիկների վրայ, այդ արել են ոչ թէ իրանց անասնական կիրքը յագեցնելու համար, այլ մատաղ աղջիկներին պարսիկներից ազատելու նպատակով. ուրեմն Աստուած մեռելներին հանգստութիւն ասէ, իսկ առաղջներին խոհեմութիւն ու քարի սիրտ։

Ալէքսանդր Մէլիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պ. Բիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուներից մինի վրա գրվեցաւ մեր խմբագրութեան մէջ պ. Աբրահամ Ամիրխանեանց։

—

«Одесскій Листокъ» լրագրում կարդում ենք, որ Օդեսայի օպէրայի անտրեպրէնեօր պ. Պալմ, որ ռուսաց օպէրա պահում էր և Թիֆլիսում, երկպատակութիւն ունենալով երգիչների խմբի հետ, Թողեց Թատրոնական գործը և հեռացաւ։ Այժմ Օդէսայի օպէրայի երգիչները և երգչուհիները կազմեցին իրանց մէջ մի ընկերակցութիւն և իրանք իրանց կառավարելով, չարունակում են ներկայացումները։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են որ վերջին ժամանակները Լազարեան ճեմարանում բաւական ուշադրութիւն են դարձնում հայոց լեզուի և հայոց պատմութեան վրա, բայց ափսոս որ միանգամայն մոռացութեան է տուած Հայաստանի աշխարհագրութեան պէս մի ծանրակշիռ առարկայ, որ մինչև անգամ միջնակարգ և ծխական դպրոցներում աւանդվում է այժմ։

—

Ա. ՊՈՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են, «Այստեղ մօտ 150 հայ ուսանողներ կան այլ և այլ բարձրագոյն դպրոցներում, բայց նրանցից գրեթէ ոչ մինը չէ աշխատում քաղուածներ անել ռուս լրագրների համար հայոց թէ Թիֆլիսի և թէ կ. Պօլսի լրագիրներից»

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒԻՑ հետեւեալը. «Այստեղ Դրիգոր Նալատարեանց անունով մի ինդէի մի [illegible] զբաղեալ բժշկում է կոտրված և մանգամանքից փչրված ոսկորները։ Սրա եղբայրն էլ, Հայրապետը նոյնպէս յայտնի է այդ արհեստի մէջ»

—

Ընթերցողը յիշում է որ շատ ժամանակ չէ Ներսիսեան զպրոցի հոգաբարձութիւնը հրաժարեցրեց Վանից քահանայ խարազեանցին զպրոցի դանձապետի պաշտօնից, իսկ այժմ լսում ենք որ հոգաբարձութիւնը դարձեալ նոյն մարդուն է ուղարկում Բօլնիսի ուխտատեղիի արդիւնքներին վերահսկելու համար։

—

«Московск. Телеграфъ» լրագիրը չգիտէ, որ Ռուսաստանը 300 միլիոն րուբլ պատերազմական ծախսերի փոխարէն, որ պէտք է ստանայ Թիւրքիայից, պատրաստ է ընդունել հողային վարձատրութիւն։ Ռուս լրագիրը լսել է որ այդ հարցի վրա բանակցելու համար է որ պ. Թեօրնէր գնացել է Կ. Պօլիս։

—

Կովկասում ձմեռը միշտ սկսվում է դեկտեմբեր կամ յունվար ամսին, այն ինչ այս տարի դեռ հոկտեմբեր ամիսը չը վերջացած, փորր ինչ ձիւն էր եկել Թիֆլիսում իսկ տարերի գլխաւոր չըղթայի վրա, ինչպէս երեւում է, այնքան ձիւն է եկել, որ հոկտեմբերի 29-ին Ռուսաստանի փոստը չը կարողացաւ անցնել տարերով և մենք այդ օրը զրկվեցանք Ռուսաստանի լրագիրներից։

—

Շնորհակալութեամբ առացանք Կ. Պօլսից պ. դօկտոր Փեշտիմալճեանից նրա ֆրանսերէն բրօշիւրը «Les eaux du lac de Derkos» վերնագրով, որի մէջ խօսվում է Կ. Պօլսի մէջ ջրի պակասութեան և Թիւրքաց մայրաքաղաքի մէջ խըմելու համար ջուրը անցկացնելու անհրաժեշտութեան մասին։ Գրքույկի մէջ յիշված է Կ. Պօլսի կայսերական բժշկական ընկերութեան հայեացքը և վճիռը մայրաքաղաքից ոչ հեռու գտնված Դերկիօս անուանված լճակի ջրի յատկութեան մասին։

—

Ֆրանսիական խումբը պ. Բիւալայի առաջնորդութեամբ, նորից սկսում է Թատրօնական ներկայացումներ տալ Արծրունու Թատրօնում։ Առաջին ներկայացումն լինելու է այսօր, չարաչթ օր, 31 հոկտեմբերի։ Կը խաղան մի քանի ֆրանսիական օպէրէտներ։ Օրկէստրը կառաչնորդի պ. Դէկկեր-Շէնկ։

—

Չինգչաթի, հոկտեմբերի 29-ին հայ գերատեսչական մշտական խումբը ներկայացրեց «Տիկին կավերլէյ», դրամա 4 արարուածով Էմիլ Օժիէի, Թարգ. Ա. Յովհաննիսեանի։ Այդ ներկայացմանը առաչին անգամ մասնակցեց պ. Օրդուբադեան, մի տեղացի երիտասարդ, որ շատ աչքի կերպով կատարեց իր դերը։ Թէպէտ պ. Օրդուբադեանի դերը (Բայնօլդ) դերբուժ համար անյարմար դեր էր, բայց և այնպէս պ. Օրդուբադեան իր խելացի խաղով ապացուցեց, որ նա կարող է առաչնակարգ դիրք բռնել, ոչ թէ միայն մեր, այլ և ուրիշ կատարելագործված բեմի վրա։

—

Երկու ուղարկեցինք Վիէննայի «Դուբնալ դ'Օրիան» լրագրին 500 րուբլ։ Ուրեմն յիշեալ լրագրի բաժանորդական 1148 ր. 53 կոպ. դումարից մնում է այժմ մեզ մօտ 648 ր. 53 կոպէկ։

—

Վանի համար այլ և այլ նպատակներով հաւաքված գումարից, որ կար «Մշակի» խմբագրութեան մէջ, 500 ր. ուղարկեցինք յօգուտ Վանի մէջ հիմնվոզ կենտրօնական վարժարանի։

—

Երէկ մեր աշխատակից պ. Թոփճի հասաւ Թիֆլիս, վերադառնալով Ղարաբաղի և Պարսկաստանի մէջ իր արած ճանապարհորդութիւնից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԴԱՐԻԱ

—

Ֆրանց-Յովսէփ կայսրը աւստրիական պատգամաւորութիւնը ընդունելով, նրա ազգայիններին հետեւեալ խօսքերով պատասխանեց։

„Պատգամաւորութեան վերջին սեսիայի ժամանակից, Բելլինի դաշնադրութեան մի քանի կէտերը իրագործելու ժամանակ ծագած դժուարութիւնները բարեյաջող կերպով հեռացած են և եւրօպական խաղաղութիւնը հաստատված է։ Մենք այդ հեւանքով ամենից առաջ պարտական ենք եւրօպական պետութիւնների փոխադարձ անկեղծ գործակցութեանը, որոնք ցանկացան բարեկարգել գործերի դրութիւնը Արեւելքում։ Այդ համաձայնութեան պաշտպանութիւնը իմ կառավարութեան գլխաւոր նպատակն էր, և մի և նոյն ժամանակ դա մի գրաւական էր մեր կայսրութեան ունեցած լաւ յարաբերութիւններին օտար պետութիւնների հետ։ Պատգամաւորութեան մէջ մտցրած կառավարութեան առաջարկութիւնները համապատասխանում են գործերի այդ ուրախալի դրութեանը։ Զինւորական միևիսթերութիւնը դիմում է ձեր առաջադրութեանը միայն այնքան, որքան դա անհրաժեշտ է սկսած գործերը վերջացնելու և մեր պաշտպանողական ուժերը յաջողութեամբ լրացնելու համար։ Բոսնիայի և Հերցեգովինայի վարչութիւնները այս անգամ ևս չեն դիմում պետութեան Ֆինանսական միջոցներին։ Իմ կառավարութեան շարունակվող ջանքերը՝ ապահովել այդ երկիրներում կարգը և հանգստութիւնը, քաջալերել նրանց մաւոր և նիւթական զարգացումը արդէն լաւ հեռանքներ ունեցան։ Համոզված լինելով, որ դուք, ինչպէս և ձեր նախորդները, կը գործ դնէք ձեր բոլոր իմաստութիւնը և հայրենասիրութիւնը ձեզ վրա դրված ծանր խնդիրները վճռելու համար, ցանկանում եմ ձեզ աջողութիւն ձեր աշխատանքների մէջ և բոլոր սրտից ողջունում եմ ձեզ»։

Այդ ճառի խաղաղասիրական ոգին ամենալաւ ապաւորութիւն գործեց։

Վիէննայի կարիներտը հրատարակեց «Կարմիր Գիրքը» մէկ առանձին յաւելուածով։ «Կարմիր Գիրքը» պարունակում է իր մէջ 539 հեռագիրներ, որոնք վերաբերվում են 1880 թ. հոկտեմբերի 2-ի և 1881 թ. ապրիլի 30-ի մէջ եղած ժամանակամիջոցին։ Գիրքը երկու մասերից է բաղկացած. առաջին մասը վերաբերվում է չէրնօգօրիական սահմանի հարցի վճռելուն, իսկ երկրորդը,— յոյն-թիւրքական վէճի հարցին։ Հրատարակված գօկումէնտներից ինչպէս երեւում է, Անգլիան աշխատում էր գցել Եւրօպային Թիւրքիային հակառակ քաղաքականութեան մէջ, բայց բարօն չէ յաջողել բոլոր ուժով ընդդիմադրում էր այդ բանին։ Այդ կարիներտը նոյնպէս խաղաղասէր էր։ Գերմանիայի և Աւստրիայի մէջ կատարեալ համաձայնութիւն էր տիրապետում։ Ֆրանսիան առաջինն էր, որ յայտնեց Ցունաստանին, Թէ Բելլինի կոնֆէրենցիայի վճիռները պարտաւորեցուցիչ չեն Եւրօպայի համար։ Այդ յայտնութեան շնորհիւ համաձայնութիւնը կարելի եղաւ կայացնել։ 1880 թ. նոյեմբերի 16-ից ուարկված հեռագրում բարօն Հայմերլէ յանձնեց աւստրիական հեռատարմատարին լօնդոնում, ասելու Գլադստօնին, որ Աւստրիան, իր կողմից, ցանկանում է պահպանել Եւրօպական համաձայնութիւնը, բայց այդ նպատակին հասնելու համար Անգլիայի առաջարկած սուիպոլական միջոցները չեն կարող ամրացնել այդ համաձայնութիւնը, որի միակ նպատակն է հեռացնել ամեն տեսակի չտապով պատել ննջարանը, սեղանատունը, խոհանոցը, բաղանիքը և փոքրիկ արուեստանոցը։ Ցնծալ Աստուած, ինչեր և ինչեր միայն չէ կարող արտադրել հայ ազգի անասելութիւնը. բաղանիքը ամբողջ ամիս է, որ չէ վառվում մի քանի խոխոջ փայտի պակասութիւնից. ննջարանի պատը փչչելով մի գիշեր ժամանակ թողել է խեղճ արուեստին անպատասխան ու յուսահատ. արհեստանոցը նոյնպէս խոհանոցի մէջ, ուր հնրճով երկու որը այդ օրը կերակուր էին պատրաստում, տեսայ մի երկու այլ փոքրիկներ, որոնք մի անկիւնում նստած սիսեռ էին խտակում։—«Ախ ուտելու համար է, հարցրի սխալմամբ։»—«Չապա» հարցրեց սխալը հայհոյանքով փոքրիկ մանուկը։ Մտքովս անցնելով Թէ գուցէ տան հայհոյութում հասկը ունենան պահելու, որոնց հարկաւոր է կեղակրել, առաջին եղած կեղտոտ և չոր աւազ գտած ու փչրված հունդերը նոցա համար կարծեցի։

Կէս ուշքս բոլորովին կորցրած իջայ մեծ սենեակը, որի մէջ մնացած որքերը ժողված, մայրապետը երգել էր տալիս օտար հիւրի ուշադրութիւնը գրաւելու համար։ Այս տեսարանը աւելի ծանր կերպով ևս ազդեց վրաս, երբ Հիշուաս երեխայքը այն օրը գրեթէ ուտելու կերակուր չունէին, բայց մի բարի օտարի շնորհը բոլորված գամառ-Թաֆիպայի և Նալբանդեանցի հայրենասիրական երգերն էին երգում ու դոքանով Թեթեւացնում իրանց վշտակոծ սիրտը։ Երգերը չափից դուրս ոգեւորված էին երգում յուզարկաւորելով մի փոքրիկ հին դաշնակի ձայնով, որի վրա ածում էր որքերից մինը։—«Մայրապետ, ով է տուել ձեզ այս դաշնակը, երեւում է, որ նա բնաւոյէ է և ով է երգեցողութեան ուսուցիչը—Դաշնակը ընծայել է պ. Ն-եանը, իսկ երգեցողութեան վարժապետը պատրիարքի եղբայրն է, որը տասը տարի է, որ ամենայն եռանդով ձրիարար վարում է այդ պաշտօնը։»—«Ինչու դաշնակը լարել չէք տալիս, նա խանդարված է։»—«Ո՛, պարոն» հառաչից մայրապետը։ Հասկացայ, որ չունէին մի քանի դրուշ այդպիսի ծախքերի համար։

Երգը դադարեց։ Ո՛, ինչ տխուր զգացմունքով կերգեն խեղճ որքերը, նկատեց ֆրանսիացին, «երանի իրանց որբութիւնը զգալ կը սոյ ինտելիգեսօրէն»։—«Ո՛չ, հայոց երգերը ընդհանրապէս տխրահնչիւն են, ասեցի, աշխատելով աջողել այդ կերպ Թշուառների դրութեան ծանրութիւնը։—«Ինչ է անունդ» հարցրեց ընկերակիցս մի եօթը տարեկան մանուկին։ Մանուկը պատասխանեց։—«Իսկ ծնողացդ անունը չես յիշում» եղաւ կրկին հարց. մանուկը մնաց չուարած, Ինչ էք կարծում. ինչ սիրտրիվ պատասխանեց. պատրաստաբան մայրապետը իսկոյն հասկանալով մանուկի տխուր օրհասական հարցի ազդեցութիւնը, ասեց մեղմութեամբ. «աղջիկս, մինչ չը գիտես. հապա ծրի համար երգեցիր հիմայ»։ Ներեց, որ գոռոզութիւնս մայրապետը շատ անգամ նկատելով ծնողաց պակասութեան մեղադրութիւնը փոքրիկ երեխաների մէջ, հաւատացրել է, որ նրանց մօր և հօր անունը Հայաստան է. վանեցոյ մայրապետի փափուկ ակնարկութիւնը իսկոյն յիշեցրեց անմեղ հրեշտակին իր տալիք պատասխանը, որով իսկոյն ասեց, «մայրիկիս անունը Հայաստան է»։—«Ինչ է պատասխանում այս հրաշալի մանուկը» հարցրեց ընկերակիցս ձայնթիս ասեմ, այս անակնկալ բանը այնպէս ուժեղ ազդեց, որ մի վայրկեան յուզմունքից բերանս մնաց փակ. Ասցի յետոյ լսածս ֆրանսիացուն, որը մնաց հիացած և անմիջապէս յիշատակարանը հանելով նկատողութիւն արեց ձեռքի ջղային շնչումով։—«Ի՛հ, կարծեմ որ հերիք է» ասեցի, աչքաուելով չուառով ազատվել այս սրտաճմլիկ տեսարանից— «Աղաչեմ, քիչ էլ կացէք» ամեն կողմից արտասանեցին հայ ազգի անաչառութեան գաւակները։ Շատ բարի, չատ ուրախութեամբ» ասեցինք, մանելով մի ուրիչ սենեակ, որի մէջ կային ձեռագործութիւններ, փոքրիկ դեզարան, գրագարան, վարդանի մեծ պատկերը և ոգի Հայաստանեայ։ Հասկացրի ընկերիս, Թէ երեխ կուզեմ մեզ պատուել տալով, որը չընդունելը կարող է վիրաւորել խեղճերին։ Ինչ էք կարծում. կէս ժամ չանցած ձեռագործութիւնները մեզանից իւրաքանչիւրի համար իրանց ձեռագործից մի մի ընծայ, որոնցից իմը չը կարողացայ ներփակել չուզարկել ձեզ, որ այդ կենդանի ապացոյցով դուք էլ մանուկից լինէք այն բոլոր խորը զգացմանց, որ փորձեցինք այդ օր երկուքս։ Կը տեսնէք, որ այդ արժանահիշ վարդանն հիւսուածքը ներկայացնում է մի կտրիճի գողտրիկ պարզ։

Հիմայ ասենք այն, ինչ մինչև հիմայ մոռանալով «Մատեան» պատուական լրագիրը, ոչ մի անգամ ոչ ոքի չը յիշեցրեց, պարտավորելով ի հարկէ վիկտոր Հիւգոյի և Գամբեթթայի չատ հետաքրքիր ճառերով։ Մեր ասելիքը այն է, որ այդպիսի մի բարեգործական հիմնարկութիւն, որը ազգին այնչափ կենսական բարիքներ կանէ, գրեթէ դեռ չունի իր երկրորդ օրինակը համարեա ազգի մէջ, մինչդեռ թէ ինչ վշտալի վիճակի մէջ է նա, արդէն քիչ հասկացողութիւն ունեցի, վասն որոյ առանց դիմելու ռուսահայերի մէջ որ և է հանգանակութեան, դիմում ենք այս անգամ ջերմագին ազաչանքով այն հարուստ և բարեկրօն հայերին, որոնք հարիւր հազարներ ունենալով Նոր-Նախիջևանի պէս հայութեան համար կոտած մի քաղաքի մէջ, մեծ կամք էլ ունենալով երբեմն մի բարեգործական նպատակին մի նշանաւոր գումար նուիրել, չը գիտեն թէ ինչի նուիրեն։ Այդպիսի բարեպաշտ մարդիկ տասը եկեղեցի չինելուց աւելի բան կը չինեն, եթէ իրանց ունեցածների գոնէ մի մասը կատկէին այնպիսի մի գործին, որով ոչ միայն իրենց կանմահացնէին, այլ ևս հարիւրաւոր անմեղ հոգիք գերութիւնից անունը փրկելով մայրիկ կը չինէին, այն էլ այնպիսի մայրեր, որոնցից միայն այս երկու-երեք տարվայ մէջ տասը հոգի ամուսնութեան են գնացել այն Նուխրական երկիրը, որին փոքրաթիւ հատակից նոքա իրանց մայրն են ճանաչում. տասը հոգի գնացած են ամուսնութեան Հայաստան, ուր նոքա չարունակում են նոյն միսիոնարական պաշտօնը կատարել որի մէջ դաստիարակում է նոցա աւժանակից մայրապետ Արբուհի Գալֆայեան։ Իսկ Թէ ինչ եղանակով կարող են կատարել ցանկացողները իրանց կամքը, այդ մասին օրինված ցանկութիւն ունեցողը կարող է անմիջական յարաբերութեան մանել Ներսէս պատրիարքի հետ։

Հետեւեալ նամակով կը գրեմ պատրիարքի հետ ունեցած անակնկալութիւնս յիշեալ Թղթակցի հետ և ունեցած հետաքրքիր խոսակցութիւններս, իսկ առ այժմ ուրախութեամբ կը շտապեմ ծանուցանել ձեր ընթերցողաց այն լուրը, որ սասցվեցաւ այս վայրկեանիս եւրօպական Թղթատարով, այն է, որ լօրդ Գրանվիլ նոր չրջաբերական է ուղարկել եւրօպական կաբինետներին, յայտարարելով որ մօտերս նրանց ուշադրութիւնը պիտի հրաւիրէ հայկական հարցի վրա, նոյնպէս այն միջոցների, որ պէտք է գործ դնել Հայաստանի քրիստոնեայ և իսլամ ժողովրդոց վիճակը բարւոքելու համար։ Լօրդ Գրանվիլ յարել է Թէ այս անգամ վերջնականապէս և լուրջ կերպով պէտք է զբաղվեն եւրոպիացիները այս գործով. устами ихъ да меду пить....

Գրիգոր Նիկողոսեան

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՂԱՀԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ՓԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 Հոկտեմբերի. „Ռօ-ՍՏՈՎՏԵՑ" լրագրէն Է. Փոքիճ-Ասլանեան Հայոց Պատրիարքի եւ Փոխանորդ Ներկայացուցչի Ընտրութեան Մասին

Ս. ՓԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 Հոկտեմբերի. Պարոն Ս. Ա. Ասլանեան Հայոց Պատրիարքի Ներկայացուցչի Ընտրութեան Մասին Հետեւեալ Հեռագիրը Կ'ուղարկէ Մեզ Մոսկուայէն.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը։

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հետեւեալ բժիշկները.

Հ ե ր ի շ 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիտիկական և կաշու հիւանդութիւնների։ Դ ա ն ի է լ է կ օ վ և Լ ի ս ի ց կ ի 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների։ Գ ա վ ր օ ն ս կ ի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների։ Կ ո ւ պ շ ի ն օ վ ի չ 12—1 ժամը սիֆիլիտիկական և ներքին հիւանդութիւնների։ Բացի այդ Գ օ ր ա լ ե վ ի չ երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւնների։ Մ ի ն կ ե վ ի չ երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների։ Վ ե ր մ ի շ ե վ երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների։ Ր է յ խ երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների։ Բ ա բ յ ե վ երեքշաբթի և շաբաթ 12—1 ժամը ջղային և ներքին հիւանդութիւնների։ Ֆ ի ս չ ա բ ե ա ն ց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և բգային հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիսի միջոյին-սեռական օրգանների հիւանդութիւնների։ Տ ա բ խ ա ն օ վ երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների։ Կինբժիշկ Բ օ ի բ ո ւ լ երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների։

Օբուխտա ատամի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով։ Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։ Բժշկանոցի գիրեկտոր

Դ. Լիսիցեվ

ԲԱԹՈՒՄԻ ԿՕՄԻՍԻՕՆԷՐ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապահարանք։

5—20

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

---

144 Адрбаւնու գալէրէա 144
ամենատէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

ՄԱՆՈՒՇԱԿ ԱՌԱՔԵԼՕՎՆԱ և ԱԻԱԳ ՕՍԻՓՕՎԻՉ ԽԱՆԴԱՄԻՐՕՎՆԵՐԸ յայտնելով առաջինը իր ամուսնի, իսկ երկրորդը իր եղբօր՝ ԹՈՄԱՍ ՕՍԻՊՕՎԻՉ ԽԱՆԴԱՄԻՐՕՎԻ մահուան մասին, խընդրում են ծանօթներին և բարեկամներին ներկայ գտնվել յուղարկաւորութեան հանդիսին, կիրակի նոյեմբերի 1-ին, առաւօտեան 10 ժամին։ Հանգուցեալին կը տանեն Մոզնու սուրբ Գէորգ եկեղեցին Ալագատօվի տանից գնախայինակայա փողոցի վրա։

1—1

Ելիսաւետեան փողոցում տան № 59. ցանկանում են էլի ընդունել ՖՕՐՏՈՊԵԱՆԻ վրա սովորող աշակերտներ ամսական 6 ր. վճարով. շաբաթական երեք դաս։ Մուտքը հայաթից է։

3—5

ԲԻՍՏՕՐԱՆԸ

ԱՐՏՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, առաջել է այժմ մի բոլորովին այլ և գեղջիկ տեսք, ուր ընտիր ձաշեր և ընթրիքներ, նոյնպէս և լաւ թմիջքներ։ Գները շատ էժան են

4—20

ՀԱՆՔԱՅԻՆ ԲԱԼՆԻՍ

Իվան Մինեցիչ Միրզոեվի որդկերանց (նախկին թագաւորական բաղնիս, Բաննայա փողոցի վրա, իշխան Բէբուտովի բաղնիսից վերև)։ Հինգշաբթի, հոկտեմբերի 22-ին բացվեցան կանանց և տղամարդկերանց հասարակական բաղնիսները և տաւանձին համարներ։ Առանձին համարի գինը 80 կ. և 1 ր. ժամը, ընտանեկան համարը 1 ր. 50 կոպ.։

1—3

ԲԱՐՁՐ ուսում ստացած մի փորձված ԴԱՍԱՏՈՒ առաջարկում է իրան ՈՒՍՈՒՑՉԻ, ՎԵՐԱԿԱՑՈՒԻ կամ դասերը պատրաստողի պաշտօնի համար պետական կամ մասնաւոր տաներից կամ օրիորդաց ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ մէջ։ Պէտք է դիմել գրաւոր Սօլօլակի, վօզնեսենսկայա փողոց, տ. Պօպօվի № 30 Ник. Гавр. Дмитріеву.

1—1

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԱԿի գէմ ապահովում է շինութիւններ, ապրանքներ, պահեստներ, գործարաններ, գիւղատնտեսական շինութիւններ և մըզելքներ։ կոմկոմի համար գործակատար Պ. Ֆ. ԲԵԺԱՆԲԵԿ։ Գրասենեակը գտնվում է երևանեակայա հրապարակի վրա քաղաքային տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երեկոյեան 6—8 ամեն օր։ ՓՈԽ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ. Քութայիսում Հ. Պ. ԲԷԺԱՆԲԵԿ, փոթի Ի. Գ. ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա Պ. ՁԱՔԱԼԲԱՇԵՎ։ Նոյն տեղը ապահովում են ներքին 5% առաջին և երկրորդ փոխադրութեան ՏՈՄՍԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետերբուրգի Ի. Վ. ԻՒՆԿԵՐ բանկային տան յանձնարարութեամբ։

(2-րդ)

ՏԻԿԻՆ ԵԻ ՕՐԻՈՐԴ ՍԱՎԻՉ,

բանալով Ֆրանսիական ՊԱՆՍԻՕՆ, ընդունում են երեխաներին։ Բացի Ֆրանսիերէն լեզուից աւանդվում են ռուսաց և գերմանական լեզուները, երաժշտութիւն և պար։ Տուն տամամշեվի № 6 Բէդիմէօնսկայա փողոց և Արտիլերիսկայա փողոցի անկիւն։

2—4 (2)

ԾԱԽՈՒՄ Է

Ջեռնատու գնով, երկու յարկանի տուն Օլգինսկի փողոցի վրա, Պօվիվալնի ինստիտուտին չը հասած։

10—10

ՀԱՑՈՑ ԼԵՋՈՒԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ դասեր ընտանիքներում ՀԱՐՑՆԵԼ. „ՄՇԱԿի“ խմբագրութեան մէջ։

ՎԻՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատօլիկոց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

94—150

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դ ա ս ա գ ր ք ե ր՝

1. Աղայեանց՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. տ. չորր. տիպ.	20	կ.
2. Տէր-Դաւիթեան՝ Русское Слово, հինգեր. տիպ.	45	—
3. Կոստանեանց՝ Նպաստ գրչի Ա. (գրարար)	25	—
4. — — — գրչի բ. (նոյնպէս)	60	—
5. — — — գրչի գ. (նոյնպէս)	40	—
6. — — — գրարարի հոլովումն	15	—
7. — — — գրաբարի խոնարհումն	25	—
8. Տէր-Յակոբեանց՝ Հայոց տառի աշխարհագրութիւն.	60	—

Ընթերցանութեան գրքեր՝

1. Աղայեանց՝ Անահիտ, հին գրոյց.	50	—
2. Աբս. ք. Բագրատունի՝ տան պատգամք	25	—
3. Տէր-Միքայէլեան՝ Թղուկ, Թարգ. Գօդէից	50	—
4. Լալայեան՝ Ահմէդի տօպրակը	10	—

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Մամուլի տակ են՝ Մանուկեանցի „Նահապետական“ և „Դիւցազնական“ աշխարհները և Տէր-Վահանեանի՝ „Մայրենի լեզու“ երկրորդ տարի։

Շուտով մամուլի տակ կը մանի՝ Սրբազան պատմութիւն հին կտակարանի Հայոցդպրաց։

Ընդհանուր երկաթեայ պատենատ ԸՐՕՐՆԵՐ, լեմֆեների պաշարով Բանասէր Ֆաբրիկայից, ծախվում են գործարանական գներով ՊԻՎՕՎԱՐՕՎԻ և ԳՕԼԴԻԻՍՏԻ կանտօրայում Թիֆլիսում, Դվօրցօվայի փողոցի վրա Ընծրունու գալէրէում № 188

11—20 (2)

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵԻ ՁԱՆԱՁՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ Թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և Համեմատն առաջինը 1 ր. 60 կ. հետև և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս դի խմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ Թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ Թէյ առանց ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ։

74—100

Дозволено цензурою, Тифлисъ 30 Октября 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.

Fonds A.R.A.M

№ 204 Նոյեմբերի 3 (15) 1881 Նոյեմբերի 3 (15) № 204

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարուանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Յատուկ պատգարակներ գնում են ուղարկի
Տեղուոյն. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
հրատարակչի բաժին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր երիտասարդութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ս. Պետերբուրգից, Նամակ Մոսկվայից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Նամակ Թիւրքիայից, Արտաքին լուրեր.—ՀԵՒԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՆՑԱՐԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Նամակ Շամախուց:

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

—

Միջնակարգ դպրոցներում իր ուսումն աւարտող հայ երիտասարդութիւնը ձգտում է միշտ գէպի բարձրագոյն ուսումը: Այդ իր ձգտումները բաւականութիւն տալու մեր երիտասարդութիւնը մի միջոց ունի միայն, այն է գնալ հեռու հիւսիս և այնտեղ մըտնել բարձրագոյն դպրոցները: Բայց ուսանող երիտասարդների մեծ մասը չքաւոր են: Ո՞րքան զրկանքներ են կրում նրանք առանց նիւթական միջոցների Ս. Պետերբուրգի կամ Մոսկվայի իրանց համար անտանելի, խիստ հիւսիսային կլիմայում ապրելով: Առհասարակ հիւսիսային կլիման դժուար է տանել հարաւում ծնված մի մարդու համար, բայց մանաւանդ աղքատ մարդուն, որ պէտք է զրկի իրան լաւ կերակուրից, տաք շորերից, չոր բնակարանից....

Եւ ահա իւրաքանչիւր տարի բազմաթիւ հայ երիտասարդներ զոհվում են հիւսիսային կլիմայի մէջ ուսման ծարաւից: Մենք ասում ենք հայ երիտասարդներ, որովհետև կովկասեան ուսանողութեան ահագին մեծամասնութիւնը ուրս համալսարաններում բաղկացած են հայերից. վրացիներից գրեթէ չը կան ուսանողների թըւում, իսկ թուրքերից և կովկասի մեր միւս ազգութիւններից ամենևին չէք պատահի Մոսկվայի կամ Ս. Պետերբուրգի համալսարանների նստարանների վրայ:

Եւ ահա հայոց հասարակութիւնը, որ տեսնում է թէ իւրաքանչիւր տարի մի քանի իր զաւակներից զոհ են գնում հիւսիսային կլիմային, անտարբեր չքաւորութեան մէջ մարտնչելով այդ իրանց համար անսովոր կլիմայի, միր հասարակութիւնը, ասում ենք, անտարբեր աչքով է նայում այդ կորուստների վրա, կարծես թէ մեռնողները նրա զաւակները չը լինէին:

Այդ տեսակ տխուր երևոյթի առջև ի՞նչ է մեր հասարակութեան պարտաւորութիւնը,—միթէ ինքն հասարակութիւնը չէ հասկանում:

Եթէ գեռ ևս յոյս չը կայ Թիֆլիսի համալսարանի շնորհով իրագործման, գոնէ հիմնենք մի հատուած, բարեգործական ընկերութիւն, որով կարողանայինք պահել չքաւոր հայ ուսանողներին Ռուսաստանի համալսարաններում: Հիւսիսային կլիման, ճշմարիտ է, ջնասում է ամեն մի երիտասարդի առողջութեանը, որ ծնված է հարաւում, բայց մանաւանդ հարուածում է չքաւորին, որ չունի տաք հագուստ, օրինաւոր, անդադար կերակուր, շոր և առողջ անհնարին: Թող հիմնվելի ընկերութիւնը միջոց տայ չքաւոր հայ ուսանողութեանը մարտնչելու հիւսիսային երկրի առանձնայատկութիւնների դէմ:

Այդ բանի վրա մտածելը մեր ինտելիգենցիայի պարտաւորութիւնն է, մանաւանդ մեր ինտելիգենցիայի այն մասին պատկանող անհատների, որոնք այժմ կարողութեան տէր են դարձել, բայց չը պէտք է մոռանան որ իրանք մի ժամանակ իրանց չքաւորութիւն պատճառով ամեն տեսակ նիւթական և բարոյական զրկանքներ են կրել ուսանող եղած ժամանակ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Հոկտեմբերի 23

Վերջապէս ուրախացրեց երկաթուղիների սակագնի (тарифъ) ինդիրը ստացաւ նոր ուղղութիւն, որ հատատումից այս օրերս Բարձրագոյն իշխանութեամբ: Միջազգային հեռագրական ընկերութիւնը ձեզ հաղորդել էր թէ երկաթուղիների ընկերութիւնները նոր արտօնութիւն են ստացել սակագնի վերաբերմամբ: Այս լուրը երևի առած էր այն բազմաթիւ լրագրական համբաւներից, որոնց դլխաւորապէս շատագում էին հաղորդելու տեղիս լրագրերը իրանց ընթերցողներին այս հարցի մասին: Բայց բանը նրանումն է, որ այն արտօնութիւնները, որք ունէին երկաթուղու ընկերութիւնները սակագնի վերաբերմամբ, մնում են նոյնը, ոչինչ այն դանազանութեամբ որ սակագինը ցածացնելու համար, պիտի նախ և առաջ ընկերութիւնն այս տեսակ դիտաւորութիւնը ներկայացնէ ճանապարհային հաղորդակցութեան նախարարութեանը, պետական կօնտրօլին և ֆինանսական նախարարութեանը:

Այսպէս Բարձրագոյն հրամանը հատատում է կրկին ճանապարհ. հաղոր. նախարարութեան իրաւունքը (չատ ընկերութիւնների կանոնադրութիւնը պահանջում է այդ) և որը այժմ պիտի ծաւալվի նա այն ընկերութեանց վրա, որոնց կանոնադրութեան մէջ չէ յիշած այս հանգամանքը: Այս նոր արտօնութեան, խօսելով միջազգային հ. ընկ. լեզուով,—ծագման պատճառը ունեցել է, երևի, երկու չարժառիթ: Նախ՝ որ պետութիւնը ունենայ միջոց կշռադատելու թէ այս կամ այն սակագնի ցածացնելը ինչ հետևանք կարող է ունենալ ընկերութեան տուրեական եկամտի վրա, որ, ինչպէս յայտնի է, չատ երկաթուղիների համար ապահոված է պետական զանձարանի կողմից, երկրորդ՝ սակագնի երևոյթի ընկերութեանց ձեռին վտանգաւոր զէնք է, որով կարող են ստրատնալ, ըստ հաճոյից՝ արմատախիլ անել անգամ որ և իցէ շահեստաբերութիւնը յօգուտ մի ուրիշ և անշան շահեստաբերութեան, կամ յօգուտ մի գործատէրին և ի վնաս միւսին... Այս ուղղութեամբ չատ կօմնետարիա կարելի է անել, եթէ չը դիմել անգամ կնանքին, որտեղ կը լսէք չատ և չատ գանգատներ, որոնք արտայայտվում են թէ մասուլի և թէ առնձնական զանազան դատակարգութեանց մէջոցներով, մեր երկաթուղիների սարք ու կարգի վրա: Այս գանգատները սպասելի էին, բայց նախատեսնել և նրանց առաջը բռնել—դժուար էր, որովհետև փորձ չը կար: Ինչ ի նկատի առնենք արևմտեան պետութեանց երկաթուղիների պատմութիւնը, մենք ակնարկ կը տեսնենք, որ ինչ որ կատարվել է այնտեղ, (և հարկէ ուրիշ ձևով) մի և նոյնը կրկնվում է այստեղ,—նոյնը կը պատահի այն երկրում, որտեղ այդ տեսակ ճանապարհը մուտ կը տեսնի: Պատճառը յայտնի է. երկաթուղին մի այնպիսի ֆեսիսթր է, որ իր երթևեկութեան հէնց առաջին օրուանից միանգամայն յեղափոխում է այն ազգի տնտեսական կեանքը, որի երկրից նա անցնում է: Այս յեղափոխութեան հետևանքները զանազան երկրների համար նոյնանման չեն, որպէս նոյնանման չեն ամեն ազգերի սոցիալական և անտեսական կեանքերը... Ուրեմն արդարացի չէ այն բարոյական նախատինքը, որ գնում են այս տարածութեան պետավարողների հասցէն, կշտամբելով նրանց թէ՝ ինչու օրինակ չեն առնում արտատահմանի երկաթուղիների կեանքից... Ընդհակառակն՝ եթէ նախատելու տեղի կայ, սա այն է որ կուրօրէն ուզում հետևել են արևմտեան կուլտուրական երկաթուղիների օրինակին: Այս վերջին հանգամանքի վերաբերմամբ էլ պարտաւորութիւնք չունենք: Ո՞ւմ պիտի դիմէին նոքա. տնային փորձ չունէին, արտասքինն էլ կուլտուրական է ու Ամերիկան: Բայց որանց փորձն էլ այն ժամանակ մանկութեան հասակումն էր: Այժմ էլ Ամերիկայում հարիւրաւոր երկաթուղու ընկերութիւններ կայ են ընկնում, որովհետև գժուար է նախատեսել այն հանգամանքները, որք տալի պիտի ունենան ապագայում, երբ ճանապարհը սկսի իր գործը... Այստեղ այնպիսի պարագաներ են հարկաւոր ծանրու քննին անել, որք մինչև այժմ դեռ չեն ընկած մաթեմատիկական հետազօտութեանց տակ, որովհետև երկաթուղու վիճակագրական թուանշանները չատ քիչ են և ազգատ

Մեր երկաթուղիների փորձը ցոյց է տալի, որ սակագնի երևոյթն չատ անգամ ինչքան վնասակար է, նոյնքան յանիրաւի: Միւս կողմից՝ առանց սակագնի երևոյթից չէ կարելի հետևակել կանոնաւոր կեանք երկաթուղու համար: Ուրեմն, տալով ընկերութիւններին սակագնի ցածացնելու իրաւունքը—և առհասարակ—սակագնի երևոյթի իրաւունքը (որոյհետ միանգամ ընդ միշտ maximum-ի սահմանը) հարկաւոր տեսնվեցաւ դնել նրանց վրա խիստ կօնտրօլ:

Գ.ա. Եազուբեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Հոկտեմբերի 22-ին

Ոչ մի քաղաքի բնակիչները կովկասում այնքան թշուառ և անպաղդ չեն, որքան չամախեցիները: 1859 թուականի սաստիկ երկրաշարժը դարձրեց նրանց բաղդի անիւները դէպի յետ. Նահանգական քաղաքի Շամախուց Բաքու տեղափոխվելը կոտրեց առևտուրը, իսկ 1862 և 1872 թուականների աւերիչ երկրաշարժները իսպառ թաղեցին չամախեցիների կենդանութեան վերջին յոյսը վերաշինների տակ: Այժմ սպասում է չամախեցիներին մի աւելի սաստիկ հարված, Շամախին Բաքու-Թիֆլիսեան երկաթուղու դծից դուրս մնալով, միանգամայն կորցնելու է իր նշանակութիւնը, վաճառականալու է նրա առևտրականների գրութիւնը, քանդի Շամախով անցուդարձ անող ճանապարհորդները, որոնք քիչ կենդանութիւն չէին տալիս նրանց առևտրի գործին, այսուհետև կը գնան երկաթուղով և էլ չեն չեղվի իրանց ուղղակի ճանապարհից Շամախի մտնելու նպատակով: Ինչ պիտի ունենան նրանք աղքատ չամախեցիներին ծախելու, կամ ինչ նրանցից առնելու, քանի որ նրանք ճանապարհի վրա կհօգնայում կամ փիլդամրում ասելի էժան կառնեն ամեն բան, ինչ որ Շամախում պիտի առնէին: Առաջին երկրաշարժից սկսած չամախեցիներից չատերը, մանաւանդ հայերը, իրանց նեղ վիճակից ստիպված սկսել են գաղթել օտար քաղաքներ իրանց օրական հացը հայթայթելու: Շատերին օտարութեան մէջ յաջողվել է, իսկ ոմանց համար ասելի վատ է անցնում քան թէ տեղս էր: Շամախեցին մի կտոր հացի համար յանձն է առնում կհօգնչայի պէս մի վատառողջ տեղ ապրելու, կամ թէ բացօդի զրնելի փոշին կուլտալու և ամառը դրա կիզիչ օդի մէջ խաշվելու, գոհ քնելով անգութ կլիմային Շամախում պահած և մնացած մանրիկ զաւակների մեծ մասը: Մինչ երկինքը այնքան բարկացել է չամախեցիների վրա, որ նրանց պրուսի համար իրանց ծնված հողի վրա, որ այդքան գեղեցիկ և արդիւնաբեր է ոչ մի ապրուստի յուսատեղ չէ թողել. այնպէս որ նրանք անչուշտ պիտի գաղթեն, որ ապրեն և ապրեցնեն իրանց գերդաստանները: Բայց ես պիտի պատասխանեմ թէ ոչ, Շամախում կարելի է ապրել և դարձեալ երջանիկ օրեր վայելել, միայն թէ այդ քաղաքի բնակիչները հասկանային բնութեան հարստութիւնից և տեղային հանգամանքներից օգուտ քաղիլ—ինչպէս չամախեցիների բաղդը երկրաշարժով թաղվեց հողի մէջ փլատակների տակ, նոյնպէս էլ նա պիտի յարութիւն առնէ նրանց ոսկեայ արդիւնաբեր հանդերից նոր ներուժդի տակուն աշխատութեամբ: Գետինը, կասես, ընդու առած կանչում է խեղճ ու անբաղդ չամախեցի գաղթականի յետքից ու աւում. ուր ես գնում, քո բաղդը իմ մօտ է, նա իմ ծոցումն է, քիչ մի աշխատութիւնը յանձն առ, մշակիր ինձ և ես առատ կը վարձանձ առ, մշակիր ինձ և ես առատ կը վարձանձ առ, մշակիր ինձ և ես առատ կը վարձանձ

Fonds A.R.A.M

ՊԱՏԱՐԱԳԱՏԱՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Հունիսի 26-ին

— Հունիսի 28 թվականին Կ. Լեհաստանի Վիսլա գետի ձախ ափին գտնվող Լազարկա գյուղի մոտ տեղի ունեցավ Ս. Աստվածածնի տոնական ուխտագնացությունը։ Ուխտագնացները հավաքվել էին Վարշավայից, Պլոցկից, Ռադոմից, Սիեդլեցից, Լոձից, Կալիշից, Կելցից, Կրակովից, Լեմբերգից, Ռադզիվիլովից, Ռադոմսկոյից, Ռադոմից, Ռադոմսկոյից, Ռադոմից, Ռադոմսկոյից, Ռադոմ

ցաւ ընաւրութիւնների մէջ, նրան իսկոյն հրաժարեցրին պալատական քարոզչի պաշտօնից, որ նա այդքան տարի շարունակ վարում էր։

Ուրիշ կողմից էլզաս-Լօթարինգիա նահանգը, որ Ֆրանսիայից կտրվելով միացվեցաւ Գերմանիայի հետ վերջին Ֆրանսա-Գերմանական պատերազմից յետոյ, ընարից մեծ մասամբ բողոքի կուսակցութեան պատգամաւորներին, այսինքն այն կուսակցութեան, որ բողոքում է էլզաս-Լօթարինգիայի Գերմանիայի հետ միացնելու գէմ։ Այդ անաջոդութեան մէջ գտնելով ինքն գերմանական կառավարութիւնն է մեղաւոր, ինչպէս շատ ուղիղ նկատեց ռուս „Գօլոսոկ“ լրագիրը։ Գերմանական կառավարութիւնը ամեն բան արաւ, որ յարուցանի իր գէմ խուլ անբաւականութիւն յիշեալ նոր նուաճուած նահանգների մէջ։ Փոխանակ այդ նահանգներին կառավարչական և ազգային ինքնավարութիւն տալու, գերմանական կառավարութիւնը բոնի կերպով մտցնում էր էլզասի և Լօթարինգիայի դպրոցների մէջ գերմանական լեզուն, դաղթեցնում էր այդ նահանգներից բնիկ երկրագործ ազգաբնակութիւնը և բոնի կերպով բնակեցնում էր նրանց հողերի վրա գերմանական երկրագործներին և այլն։ Եւ ահա նոր նուաճուած երկիրների ժողովուրդը, որ գեռ մոռացած չէր այն ազատութիւնները, որ վայելում էր Ֆրանսիայի տիրապետութեան ժամանակ, բողոքից գերմանացիների բռնատիրութեան գէմ, ուղարկելով պարլամենտ բողոքի, այսինքն Ֆրանսիային կուսակից պատգամաւորներին։

Այդ միջոցներով, ասում է „Գօլոսոկ“ լրագիրը, չէ կարելի բան բարեկամացնել մի հպատակ ազգութիւն, այլ նրա համակրութիւնը կարելի է գրաւել միմիայն ազատութեամբ։ Լրագիրները հաղորդում են, որ գերմանական յեռապէմ թերթերը, որոնք անչափ ինքնավստահ և յանդուգն էին ընարութիւններից առաջ, այժմ, երբ ընարութիւնների մէջ յաղթուեցան, սկսում են աւելի մեղմ կերպով խօսել, այլ և այնքան յանդուգն չեն և որովհետև յոյս չունեն իրանց կողմը դարձնել կղերական կենտրօնը և անհնարին համարելով, ի հարկէ, հաշտուել ծայրայեղ պրօգրէսիստների հետ, որոնց պատասխանների են Բիսմարկի երդուեալ թշնամիները, ինչպէս Վիրխօվ, Բիխտեր, Լէօվէ, և ազատամիտներից անջատուածները, ինչպէս օրինակ Լասկեր, սկսում են այժմ փոքր առ փոքր շողոքորթել չափաւոր ազատամիտներին, որոնք մի ժամանակ իշխան Բիսմարկի կուսակցութիւն էին կազմում, մինչև որ նա ինքն ազատամիտ էր։ Բայց հէնց որ նա յեռապէմ դարձաւ, այդ կուսակցութիւնը նրանից բաժանուեցաւ։ Շատերը հիմա հետաքրքրւում են այն հարցով թէ չափաւոր ազատամիտները միթէ նորից կընկնեն յեռապէմ կուսակցութեան ձեռքով նրանց հաշտուելու համար լրած որոգայթների մէջ։

Մի և նոյն ժամանակ կղերական կուսակցութիւնը յայտնում է իր օրգան «Գերմանիա» լրագրի մէջ, որ երբէք չի հաշտուի իշխան Բիսմարկի հետ և կղերականները այժմ լինելու պարլամենտական կրկնաքուէարկութիւնների մէջ, որտեղ մրցելու են պրօգրէսիստները, սօցիալիստները և պահպանողականները, խորհուրդ են տալիս իրանց ընտրողներին, որովհետև կղերական կանդիդատ չունեն այդ կրկնաքուէարկութիւնների մէջ, ձայն տալ պրօգրէսիստների կամ սօցիալիստների համար, և երբէք ձայն չը տալ պահպանողականների, կամ կառավարութեան կանդիդատների համար։

Այդ անելանելի դրութիւնը իշխան Բիսմարկ շատ լաւ հասկացաւ այժմ և, ինչպէս երեւում է, յետապէմ լրագիրներին հրամայուած է այժմ նորից շողոքորթել չափաւոր ազատամիտներին, քանի որ Ծայրայեղ ընդդիմադրութեան, պրօգրէսիստների և սօցիալիստների ներկայացուցիչները երբէք հաշտուելու չեն Բիսմարկի քաղաքականութեան հետ։ Զարմանալի է որ վերջին ընարութիւնների ժամանակ սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան ընտրողների թիւը նշանաւոր կերպով աւելացաւ, չը նայելով որ այդ կուսակցութեան գէմ յայտնված են բացառական օրէնքները, որ սօցիալ-դէմօկրատներին պատկանող բոլոր լրագիրները արգելվեցան, որ այդ կուսակցութեան անդամներին չէ թոյլ տրվում հաւաքվել, ժողովներ կազմել, որ նրանցից ամենանշանաւորները աքսորված են։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

Կ. Պօլիս, 15 հոկտեմբերի

Ինչպէս շատ նիւթ ունեմ գրելու, որ չը գիտեմ ինչով սկսել. մի այցելութիւն գաւմ-գափուի մայր վարժարան. մի պատմա պ. Մինաս Զերազի, իր եղբօր և մի խմբագրի ընկերակցութեամբ հաստատների բնակված աւերակները. պատերազմի անուան օրը ամսոյ 11-ին և պատերազմի մօտ եկած պաշտօնական հիւրերի շարքը ուշացած ուշացած խօսակցութիւնները. պ. Զերազի այցելութիւնը Ամերիկայի դեսպանին ու նրա հետ ունեցած հետաքրքիր խօսակցութիւնը հայոց մասին. «Journal d'Orient»-ի գրած տխրալի նամակը պ. Զերազին կ. Պօլսի հայերի մահառիթ անտարբերութեան մասին դէպի հայոց այդ նորահաստատ օրգանը. կամաւորականից իմ ստացած մի շարք հետաքրքիր նամակներ Հայաստանից. վերջապէս իմ երկկոյ այցելութիւնը պատրիարքին իր ամառնային տանը Խաս-քէօյի մէջ—այս ամենը այնչափ նիւթեր են, որ ոչ մի նամակով ազատվելու են և ոչ մի քանիս։ Բայց սկսենք վերջից, որովհետև պատրիարքի հետ ունեցած տեսակցութիւնս ամենի հետաքրքրական եմ կարծում ձեր ընթերցողների համար։

Անչափ վրդովված մի խոտոր տեսարանից, որ պատահել կ. Պօլսի հայ ընտանիքներից մէկի մէջ, չը կարողացայ որոշութիւն ունենալ ամսոյ 11-ին գնալ պատրիարքարան պաշտօնական այցելութեամբ, վաստոյ որոշեցի մի երկու օր յետոյ առանձնապէս տեսնվել պատրիարքի հետ միայնութեան մէջ իր սենեկան տանը։

Երբէք չէի պատահած Ներսէսին մի այսպիսի արտայայտութեան մէջ. մի կողմից նա երևայ իմ ծանր մտահոգութեան մէջ, միւս կողմից էլ շատ փափագով խօսակցելու համար. առհասարակ Ներսէսը քիչ մնալամոգաւոր բնաւորութիւն ունէ, որով առաջին անգամ առաջի տեսնողի վրա գուցէ բաւարարիչ տպաւորութիւն չը գործէ։ Նորան շատ մտից և վազուց ճանաչողները ասում են, որ ընդհանրապէս նպաստ է պատահում նորա մէջ փափագ տեսնել կէս կամ մի ժամ մէկին հետ հաւասով խօսելու համար, վասնորոյ որչափ գոհ պիտի լինէի, երբ միայն բարեաւ ասելու ժամանակ նայեցի ժամացոյցին և տեսայ, որ արդէն 2½ ժամ եմ նստել, որը սակայն բոլորովին նկատելի չեղաւ։ Նիւթերը փոփոխվում էին շատ արագ, որոնցից իւրաքանչիւրի վրա պատրիարքից լսած դատողութիւնները հրացնում էին ինձ որչափ խնամտի և համաւիանան կողմից, այնչափ և պարզութեան և համեստութեան։ Առաջին անգամն էր տեսնում կեանքիս մէջ մի հայ մարդ, որը նոյնչափ բարձր էր իր դրութեամբ, որչափ հասարակ, նոյնչափ վսեմ էր և մեծ իր քննադատութեանց մէջ, որչափ ներողամիտ և համեստ։ Պատրիարքի յայտնած ամեն մի կարծիքը լաւագոյն էր կրկնապատկված ուշադրութեամբ, ինչպէս մի բազմահմուտ Ոդիսևսի խօսքեր, որոնցից իւրաքանչիւրը խորը դրոշմվելով մտքի մէջ պիտի դառնան մի սի պատգամ լուռի ամրողջ կեանքի համար։ Գիտեմ, որ շատ պիտի հետաքրքրվին ձեր ընթերցողները այս ամենի վրա, բայց ցաւում եմ, որ նախ՝ բանաւոր պատճառներով չը պիտի կարողանամ յանձնառու լինել նոցա հետաքրքրութեան բաւարարութիւն տալու, երկրորդ՝ դորա կատարելու համար հարկաւոր է գոնէ քսան թերթանոց նամակ գրել, որ ոչ ձեզ համար է յարմար և ոչ ինձ համար։

Ը նայելով այս ամենին սակայն պատասխանութիւն եմ համարում տալ ձեզ ինչ միայն կարելին է հայոց հարցի վերաբերմամբ։ Պատրիարքի յայտնած միտքը մօտաւորապար հետևեալն էր կայտնում. հայոց հարցը այնչափ ժողովրդականութիւն է գտած Եւրոպայի մէջ և այնչափ հասունացած կաբինետների առաջ, որ նորա խափանվելը և մոռացվելը անհնարին է, բայց խնդիրը միայն նորա մէջն է, որ մի կողմից Թիւրքիան որամադրութիւն չունենայ խոչդոռներ դնել այդ խնդիրը չուտով և հեշտութեամբ կարգադրելու համար, միւս կողմից Եւրոպան կարող լինի Անգլիայի հետ հանակերպվիլ նորն եռանդով և նորն հաստատամտութեամբ հայոց դատը առաջ քշելու։ «Ահա այս երկու բանն է հարկաւոր մեզ» ասեց պատրիարքը ու սկսեց իր կարծիքները յայտնել այդ երկու պայմանները դիւրացնելու համար։ «Ը կարծէք որ Թիւրքիան չէ զգում իր վատթարացած ներքին կացութիւնը, ասեց պատրիարքը. չը կարծէք որ նա չը գիտէ թէ արդի ատիպոզական է բարեփոխել Փոքր-Ասիայի ոչ միայն քրիստոնեայ տարրի վիճակը, այլ և մուսուլման հպատակներին էլ, բայց ցաւագութեամբ պէտք է ասեմ, որ Թիւրքիան այդչափ չարաչար տուժելով Եւրոպայի իր առաջվայ հպատակների ձգտումներից, հայոց ձգտումների վրա էլ նա նայում է ինչպէս բոլգարների և սերբերի ունեցած միտումներին, վասնորոյ կրկին անգամ հրդեհասունէից վիճակի բարեփոխում լսելիս, նա երևակայում է իրան նոյնը մոռացող ապստամբ, ինչ նպատ սերբերը և բոլգարները, մինչդեռ յայտնի է որ ոչ մի հայի մտքով չէ անցնում այնինչ ուրիշ բան, բայց վայելուչ քաղաքական և հասարակական կացութիւն ընդ հպատակութեամբ և կենակցութեամբ Թիւրքիայից»—Բայց միթէ Թիւրքիան չը գիտէ, որ կոտրածանելով հայերին, նա կոտրածում է և իրան, որովհետև երբ ջնջվից Հայաստանը իր երկու միլիոն քրիստոնեայ ժողովրդով, այդ օրից վերջ կարելի է համարել Թիւրքիայի գոյութեանը—«Ն, նկէք ու հակակշիռը ասաց ասաց պատրիարքը։ —Բայց ինչ ելք կայ, սրբազան, Թիւրքիայի կառավարութիւնը վստահացնելու ու գիջումներին համաձայնեցնելու.—«Իմ կարծիքով միակ մի ելք, ասաց պատրիարքը չէչտելով, «հարկաւոր է, որ ես հրաժարական տամ»—«Հրաժարականն, բացականչեցի, ինչպէս կարելի է, առանց ձեզ միթէ բան կարող է լինիլ»—«Այո, կը լինի ասաց նա, որովհետև ինչպէս վերը յայտնեցի, հայոց հարցը արդէն չէ կարող խափանվիլ ով որ լինի իմ պաշտօնից անցնող պատրիարքը, մինչդեռ իմ հրաժարականս այն կարող է յառաջացնել, որ Թիւրքիան իմ յաջորդիս գուցէ աւելի վստահութիւն կունենայ, քան թէ Ներսէսին, որը նորա աչքում մի խոտոռիլակ է դառած, իսկ միւս կողմից հրաժարականս պատճառ ես կերթամ Եւրոպա ու.....»

Այսչափով բոլորովին պարզվեց պատրիարքի համոզումները հայոց հարցի լուծումը փութացնելու համար. նորա վրա ունեցած համարումը Եւրոպայի մէջ այնչափ մեծ է, որ Ներսէսի Եւրոպա ճանապարհորդելը չէրաւ կարող է բոլորովին ցնցել հասարակաց կարծիքը և մեծ զարկ տալ և վերջնական լուծում տալ հայոց հարցին։ Պատրիարքի Եւրոպա գնալու բուն պատճառը թէպէտ պիտի լինի, ինչպէս իսկապէս էլ է, նորա մաշիլ և օրէց օր աւելի ծանրանող հիւանդութիւնը, վասնորոյ Թիւրքիան բնական է, որ ոչինչ ասելիք չի ունենայ նորա ցանկութեան դէմ, երբ այս ցանկութիւնը կարտայայտէ մի մարդ, որի մի ոտը սանն վայրկեան գերեզմանի չէմքի առաջ է—«Գիտէք թէ ձեզ յաջողվեց հրաժարական տալ Եւրոպա գնալու համար, նկատեցի, բայց գիտէք որ հայոց պատրիարքը Եւրոպա չրջելիս պիտի չրջէ ոչ ինչպէս որ և է մի եպիսկոպոս, այլ ինչպէս իշխան, որովհետև սա Ասիա չէ, որ գերվիշութեամբ մարդ հօլա գնայ, իսկ որ տեղից և որ ազգից պիտի հանուի ձեզ գոնէ մի քանի տասնեակ հազար բուրլ օգնութիւն»—«Ո՛, ոչինչ ոչոքից չեմ ուզում, ասեց նա, ձեռքերով յետ քշելով հայ հարուստներից ստացելի օգնութիւնը, ես կը պատեմ Եւրոպա ինչպէս անբաղդ ներկայացուցիչ մի թշուառ և արիւնաքամ ազգի, ես կը շրջեմ աշխարհ ինչպէս մի Պետրոս Ամիենացի, մէկուսիայնակ, ինքս լինելով և իմ ապաստարը, և իմ քարոզուղարը և հայոց պատրիարքը» ձևմարիտ ասած, այս խօսքերը չատ յուզեցին ինձ, տեսնելով, որ պատրիարքի ասածը ուրիշ ազդեցութիւնից չէր, բացի այն տխուր փորձերից, որին նա հանդիպել է հայ հարուստների մէջ հայոց հարցը երեսն գալու օրից ի վեր, ուր իւրաքանչիւր դէպքում հազար ոսկիներ է հարկաւոր եղել պատրիարքին եւրոպական խմրագիրներին, թղթակիցներին և ուրիշ հարկաւոր մարդիկներին չանելու համար, բայց պատրիարքը կարողացել է առաջարկել նոցա միայն մի բաժակ սուրճ իր պատգին ազերսի և ջերմ ազօթքի հետևանան այսպէսով է սանձել հայոց հարցը և հասցրել մինչև այս կէտը կ. Պօլսի Եւրոպա պատրիարքը, երբ Էջմիածնի pontifex maximus-ի իւրաքանչիւր վերջին եպիսկոպոսը հարիւր հազարներով է միշտ խազացել իր բարի օրինակ վահ. Մանկասեռիից բարոյական իրաս առնելով...

Երբ մինչև վերջը լսեցի պատրիարքի պլանը իր հրաժարականի հետ, ակամայ հարց առաջ եկաւ թէ ով կը լինի հարպա իրան արժանի փոխարինողը։ Ներսէսը առաւ երեք մարդի անուն, որոնցից մէկի վրա շատ վիճեցի, այդ երեքից առնելին և առաջինը անուանեց պատրիարքը Զմիւռնիայի առաջնորդ Գաբրիէլին Մուրատեան եպիսկոպոսը։ Յայտնի է, որ նա կավկասեցի է և շատ ճշմարիտ և անխարդախ մի հոգի, թէպէտ գուցէ ոչ շատ աստուածաբան և ոչ էլ եւրոպագէտ... Այս անգամ այսչափը։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Bohemia» լրագրի խօսքերով, Աւերքիան թագաւորութիւն հրատարակելու խնդիրը բարեյաջող կերպով վճռվելու ճանապարհի վրա է։ Ասում են, որ իշխան Միլանին շատ տեղերից հաւատացնում են, թէ նրա թագաւորական տիտղոս ընդունելը ոչինչ արգելքների չի պատահի, այնպէս որ եթէ սերբական ազգային ժողովը կը հետևի բուխարեական ազգային ժողովին, սերբական թագաւորական հարցը հաստատապէս կը վճռվի։

—Վիէննայից «Politik» լրագրին հեռագրում են, որ Հունգարիա թագաւորը միաժամանակ վիէննա և Բերլին դիմից հարցնելով, թէ արդեօք ախորժելի կը լինի իր այցելութիւնը Բերլինից պատասխան առացաւ, որ կայսրը սանն ժամանակ ուրախ է ողջունել թանգագին հիւրին, բայց ինքն այնքան հաւասն չէ, որ տիրոջ թագաւորին տարվայ այսպիսի ժամանակին այդպիսի երկար ճանապարհորդութիւն սկսել և եթէ նա դիմում է խնդրելով մինչև գարունը յետաձգել այդ ճանապարհորդութիւնը, այդ միայն այն յուսով է, որ նոար ունենայ ողջունել Բերլինում նոյնպէս և թագուհուն, առանց որ և է վնասի նրա առողջութեան համար։

—Լրագիրները հաղորդում են հետևեալը. Գիտոին մօտ ճանաչող անձինքը խոր համոզված են, որ նրա խելագարութիւնը կեղծաւորութիւն է և սում բանտում եղած բոլոր ժամանակը, մինչև այն օրը, երբ պաշտպանութեան պլանը բոլորովին վերջացած էր, նա խելագարութեան ոչ մի նշան չէր ցոյց տալիս։ Ակզբում նա ամեն բան հերքում էր, բայց այն օրից, երբ նա հարկաւոր համարից իրան խելագար ձևացնել, նրա բոլոր գործողութիւնները և գրութիւնները խելագարութեան նշան էին կրում։ Նա մինչև անգամ ծայրայեղութեան էր հասնում։ Բայց այժմ նա և նրա պաշտպանը կատարելապէս համոզվեցան որ այդ կեղծ ձևերը շատ չեն օգնիլ և ահա Գիտոն կրկին իր խելացի ձևերը ընդունեց։ Նա թէ գիշերվանդես և թէ բարձրագէտ բոլորովին առողջ է։ Նրա պաշտպանը խնդիրք առեց դատարանին դատաստանական քննութիւնները նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 21-ը յետաձգել։ Դատարանը համաձայնվեց գործը մինչև նոյեմբերի 14-ը յետաձգել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ արդարադատութեան նախարարը հրամայել է լուրը կովկասի կառավարութեան

Fonds A.R.A.M

փոփոխութեան մասին՝ ենթադրված է կովկասը բաժանել վեց շրջանների և զինուորական հրամանատարութիւններին: Կառավարչական հաստատութիւն. Հիմնված է միանաժողով ներքին հարկերի և դատաստանների բաժինը բարելաւելու համար: Նախագահը կօրանուէլն է, անդամները՝ վրաքննող սենատորները, յայտնի բաժիններից ներկայացուցիչները և տեզապի գործին ծանօթ անձինք: Այդ մասնաժողովը կը քննէ 1859 թուին նշանակված յանձնաժողովի աշխատանքը հարկերի վարչութեան առարկայի վերաբերութեամբ, բացի այդ կը քննէ գիմամօնների վճիռները, գիւղատնտեսական հիմնարկութիւնների վերանորոգութեան հարցը և սենատորների ձեռք բերած տեղեկութիւնները: Կառավարութիւնը յանկանում է, որ կապ լինի վարչութեան և հասարակական գործունէութեան միջև: Մի և նոյն ժամանակ սահման դնել նրանց իրաւունքների և պարտականութիւնների միջև: „Новое Время“ և „Новости“ լրագիրները հաղորդում են. ներքին գիւղատնտեսների ծառայութեան ժամանակաշրջանը 10 տարի նշանակել և ոչնչացնել 4 կարգի արտօնութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 հոկտեմբերի: Հոկտեմբերի 30-ին էկսպերտները քննում էին դոյութիւն ունեցող գաղթականութեան կանոնադրութիւնը: Առաջարկված է անցագրերը փոխարինող գաղթականական փոյատիր մտցնել երկու տարով, որով կարելի է ազատ գաղթել և դարձեալ վերադառնալ նախկին բնակութեան տեղը: Խորհրդից հաստատված այդ նախագիծը այսօր ամրողջապէս հրատարակված է: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ 1882 թուականի բիւդժեան ծախսերը փոքրացած կը լինեն մինչև 75 միլիոն րուբլի: Տրիգօնների գործը յետաձգված է մինչև դեկտեմբեր: Շերմաշիձեի դատաստանական գործին հասարակութիւնը ներկայ է առանձնով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 հոկտեմբերի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է. հոկտեմբերի 29-ին էկսպերտները ժողովին տակաւ գնել գինին չարկաով և վիդրայով ծախելու համար: Խմիչքների առևտրի վրա հակելը պարտաւորեցուցիչ պէտք է լինի հասարակութեան համար: Այդ հոգութեանը կարող են և հրէաները մասնակցել, եթէ նրանք քնարվեն: Մաքսային տարիֆները վերաքննող յանձնաժողովը հոկտեմբերի 5-ին կը սկսի իր աշխատանքները:

ՓԱՐԻԶ, 29 հոկտեմբերի: Ֆերրիի վիճաբանութիւնը հրաժարական առնչ գամբետտա Գրեվիի հետ խորհրդակցելուց յետոյ անյապաղ ձեռնարկեց նոր մինիստրութեան կազմակերպութեանը:

ԿԱՐԼՍՐՈՒԷ, 30 հոկտեմբերի: Մեծ դուքսը հիւանդութեան պատճառով պետութեան բոլոր գործերի կառավարութիւնը յանձնեց ժառանգ մեծ դուքսին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 հոկտեմբերի: Պետական բանկի 5% առմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 91 ր., հինգերորդ 91 ր., ներքին առաջին 5% փոխառութեան առմակը արժէ 220 ր. 75 կ., երկրորդ 215 ր., արևելեան առաջին փոխառութեան առմակը արժէ 90 ր. 5 կ., երկրորդ 90 ր. 12 կ., երրորդ 90 ր., ասկի 7 ր. 64½ կ.: Թուաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 25,81 պէնս, Ամստերդամի վրա 130,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 220 մարկ, Փարիզի վրա արժէ 272 ֆրանկ: Բօրսայի արամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—11 ժամը:

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հետեւեալ բժիշկները.

Հերցիշ 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիտիկական և կաշու հիւանդութիւնների: Դանիէլեկով և Լիսից 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների: Գավրօնսկի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների: Կուդրինովիչ 12—1 ժամը սիֆիլիտիկական և ներքին հիւանդութիւնների: Բացի այդ Գօրաելովիչ երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւնների: Մինկևիչ երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների: Վերմիշևիչ երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների: Բաբաջով երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների: Ֆիլիպին և ներքին հիւանդութիւնների: Չարևանց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և բգային հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիտ միջպետական օրգանների հիւանդութիւնների: Տաբատաձով երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների: Կինբժիշկ Րօբրօուլ երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների:

Օրբելիան առաջի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով: Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար: Բժշկանոցի դիրեկտօր:

Դ. Լիսիցկի

Եւ ս ա ե ա ն փողոցում տուն № 59. ցանկանում են էլի ընդունել ՖՕՐՏՕՊԵԱՆի վրա սովորող աշակերտներ ամսական 6 ր. վճարով. շաբաթական երեք դասական Մուսաքը հայախիչ է: 4—5

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНІ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՐԷՍՏՕՐԱՆ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, սաստիկ է այժմ մի բոլորովին այլ և գնդեցիկ տեսք, ունի ընտիր ճաշեր և ընթրիքներ, նոյնպէս և լաւ խմիչքներ: Գները շատ էժան են

5—20

ՀԱՆՔԱՅԻՆ ԲԱՂՆԻՍ

Իվան Մինէյիչ Միրզոեվի որդիների (նախկին թագաւորական բաղնիս, բանեցյալ փողոցի վրա, իշխան Բէբուտովի բաղնիսից վերև): Հինգշաբթի, հոկտեմբերի 22-ին բացվեցան կանանց և տղամարդկանց հասարակական բաղնիսներ և առանձին հասմնարներ: Առանձին հասարի գինը 80 կ. և 1 ր. ժամը, ընտանեկան հասարը 1 ր. 50 կոպ.:

2—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶՈՒՄ ներկայ 1881 թուականի նոյեմբերի 9-ին լինելու է **ԱՃՈՒՐԲ**, օրէնքով որոշված կրկնաձեռքով երեք օրից յետոյ ծախելու համար միանդ կից **ԵՐԵՔ ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔԵՐ**, որոնք գտնվում են Թիֆլիսի 2-դ բաժնում **ԿՕՆՍՈՒԼՍԿԱՅԱ ԵԻ ՆՕՎՕԲԻԲՐՈՒՏՕՎՍԿԱՅԱ ՅԱ** փողոցների վրա և որոնք պատկանում են Առատակի Սօվմանիկ խոյ Աբաեմիչ **ՏԷՐ-ԳՈՒԿԱՍՕՎԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ**· կոչեժակի ասեսոր Գաբրիէլ, կոլեժսկի բէկիսարատոր **ԿՕՆՍՏԱՆՏԻՆԻՆ** և պոռնկական **ԱՐՏԻՄԻԻ և ՍՕԼՕՄՕՆ** տէր-Գուկասօվներին և նրանց քոյր կոլեժսկի ասեսորի կին **ՏԵՐԵԶԱ ՄԱՋԻՐՕՎԻՆ**:

1) Երկու յարկանի տուն սարդափով, կառուցված է այրված աղիւսից, քարից, կրից և գաջից կրաժիտեհ կառուց. 140 քառակուսի սաժէն հողով և այդ տանից կազմի է դռներ բանալ նօվօ-Բէբուտովսկայա փողոցի վրա:

2) Երկյարկանի տուն սարդափով և առանամանիքով, կառուցված նոյն նիւթերից նոյնպիսի կառուցով և 100 քառակուսի սաժէն հողով և 3) երեք յարկանի տուն նոյն նոյնպիսի կառուցով 482 քառակուսի սաժէն հողով և այդ տանից նիւթից կառուցված նոյնպիսի կառուցով նոյնպիսի կազմի է դռներ բանալ նօվօ-Բէբուտովսկայա փողոցի վրա: Ամբողջ պարտքը պրիկազին մինչև կրկնաձեռքի օրը, այսինքն նոյեմբերի 13-ը յիշեալ տների վրա հաշուում է 54,847 ր. 95 կ:

Վերոյիշեալ կալուածները գնել ցանկացողները կարող են տեսնել թէ շինութիւնները, թէ գնահատական ցուցակը պրիկազի մէջ. նոյնպէս և պարտքը փոխանցելու պայմանները: 2—3

Մամուլի տակից գտաւ և վաճառում է կամար **ՏԷՐ-Գաբրիէլեանցի** „РУССКОЕ СЛОВО“—ն ու դասագիրք ասուածբէն լեզուի, հայ գպրոցների համար, **ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**: Ընդունված է վարժարանի և ուսումնարաններում, նոյնպէս կովկասի և միւս թեմերի ուսումնարանների շատերում: Վաճառում է Թիֆլիսում բացառապէս „Կնոգրօնական“ գրավաճառանոցում: Գինն է 45 կոպէկ: Գումարով գնողներին քանակութեան համեմատ զիջումն կը լինի: Յանկացողները պէտք է ուղղակի դիմեն „Կնոգրօնական“ գրավաճառանոցին. Тифлисъ. «Центральная книжная торговля» 1—7

ԹԻՒՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵԻ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի խանդան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ և ԱՐՃԱԽ**: 75—100

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԻՐԵԱՆ դասեր ընտանիքներում: Հարցնել, **„ՄՇԱԿԻ“** խմբագրութեան մէջ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

	Գ ա ս ա գ ր ք ե ր՝	
1.	Աղայեանց՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. տ. չորր. տիպ.	20 կ.
2.	տէր-Գաբրիէլեան՝ Русское Слово, հինգեր. տիպ.	45 —
3.	կոստանեանց՝ Տաղկաքաղ հրջան ա. (չորեքր)	25 —
4.	— — — հրջան բ. (նոյնպէս)	60 —
5.	— — — հրջան գ. (նոյնպէս)	40 —
6.	— — — գրաբառի հոլովումն	15 —
7.	— — — գրաբառի խոնարհումն	25 —
8.	տէր-Յակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 —
	Ընթերցանութեան գրքեր՝	
1.	Աղայեանց՝ Անահիտ, հին կրոց.	50 —
2.	Արս. ք. Բագրատունի՝ տասն պատգամք	25 —
3.	տէր-Միքայէլեան՝ Թուխ, Թարգ. Գօդէից	50 —
4.	Լալայեան՝ Ահմէդի ասպրակը	10 —

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ·

Մամուլի տակ են՝ Մանդինեանցի „Նահապետական“ և „Դիւցազնական“ աշխարհնեը և տէր-Գևոնդեանի՝ „Մայրենի լեզու“ երկրորդ տարին:

Շուտով մամուլի տակ կը մանի՝ Սրբազան պատմութիւն հին կտակարանի Հայոցդրու:

Անգլիական երկաթեայ պատենատած ԱՐՕՐՆԵՐ, լեմֆինների պաշտպան Բանասէր Փարրիկայից, ծախվում են գործարանական գներով ՊԻԿՕՎԱՐՕՎԻ և ԳՕԼԴԼԻՒՍՏԻ կանտորայում Թիֆլիսում, Վիկտորիական փողոցի վրա Ընծրուեու գալերէում № 188 12—20 (2)

Дозволено цензурою, Тифлисъ 2 Ноября 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.

Fonds A.R.A.M

№ 205 Նոյեմբերի 4 (16) 1881 Նոյեմբերի 4 (16) № 205

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում պրկում են միմիայն խմբագրատան մէջ.

Корреспонденціи пишутся на имя
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ինչում:

Յայտարարութիւնների համար վճարում են
հրատարակիչը քառի 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. ՆԵՐՔԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Ֆրանսիա. Ասորւոց-Ողնգարիա. Նամակ թիւրքիայից.— ՀՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՒՈՐԱԿԱՆ. Նամակ թիւրքիայից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Հոկտեմբերի 31

Կարդալով ձեր պատուական «Մշակ» լրագրի 203 համարի մէջ տպած պ. Գ. Նիկողոսեանի նամակը, որի մէջ նկարագրած է Թչուառ դրութիւնը կ. Պօլսի որբանոցի և ազեատալի վիճակը որբիկներին, նա մանաւանդ անտանելի չարչարանքը խնամակալ մայրապետ Արբուհի Գալֆայեանի տան և հինգ տարվայ ընթացքում, ոչ սակաւ արտասուք թափվեցան իմ աչքերից, նրա համար, որ ես անձնէնուատ եմ բարեգործելու զառնագոյն վիճակը ողորմելի որբիկներուն. Միայն կարող եմ նուիրել նրանց իմ ծնողից նշանակած իմ ծննդեան օրվայ ծախսի համար երեք րուբլի և խառատանալով իւրաքանչիւր տարի 31 հոկտեմբերի առաքել յիշեալ որբանոցի տաների համար երեք րուբլի որով գոնէ փոքր ինչ նպաստ կը լինի իմ ազգի անանխրունջ որբերուն:

Ուստի առաջարկելով երեք րուբլի, խնդրեմ ձեզ՝ ողորմած աչք, բարեհաճիլ առաքել այս չնչին դրամը առաքինի մայրապետ Արբուհի Գալֆայեանին:

Աշակերտուհի Ս. Գայանեան օրիորդաց ուսումնարանի

Շուշանիկ Առուանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մինչև այժմ մեր խմբագրութեան մէջ պ. Փիւրքճեանի ֆօտօգրաֆիական ժողովածուի համար հաւաքված բոլոր փողերը արդէն յանձնեցինք պ. Փիւրքճեանին, իսկ այսօր կրկին ուղեցինք մի 20 րուբլ պարունին յանձնելու, որ բաժանը կարակուրտից պ. բժիշկ Միրիմանեանցից հաւաքել նամակով «Որովհետև այժմ հիմնվել է Թիֆլիսի մէջ բարեգործական ընկերութիւնը, որի նպատակն է ի միջի այլոց ողնել և հիւանդներին, այդ պատճառով խնդրեմ այն 25 րուբլ դուամարից, որ մնում է խմբագրութեան մէջ, որ ուղարկել էի անցեալ տարի յօգուտ բժշկական օգնութեան կոմիտեի, որ գժբազդաբար չը կայացաւ, 5 րուբլ տաք վերոյիշեալ ընկերութեանը, անդամական վճարը 1882 թի համար, իսկ 20 րուբլ յանձնէք պ. Փիւրքճեանին ուղարկելու ինձ Ախլի աւերակների ժողովածուն»

—

Շատ տեղերից համակրական նամակներ ենք առանում մեր առաջնորդող յօդուածի առիթով Էջմիածնի «Արարատ» ամսագրի դէմ ուղղված, ի միջի այլոց մեր բարեկամներից մէկը մեզ գրում է. «Վերջապէս պէտք է վերջ դնել մեր եկեղեցականների անկարգութիւններին. իմ խորին համակրութիւնն ընդունեցէք ձեր առաջնորդող յօդուածի համար. Շատ լաւ էք մատնել դատաստանի կանչել այն ամբաստիրը, որի դէմվին է անհնազանդ մատնութիւնը»

—

Մի ուրիշ խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Արդէն վերջացրել եմ Դիլիջնա անպլիական մատենագրի «Малютка Тимъ» մանկական գրքոյկի թարգմանութիւնը, ուստի խնդրեմ յայտնէք պ. պ. թարգմանիչներին, որպէս զի ձեռնամուխ չը լինեն երկրորդ անգամ թարգմանելու նոյն հեղինակութիւնը»

—

ԿԱՂՋԻԱՆԻՑ մեզ գրում են, որ հոկտեմբերի 23-ին սկսեց այդտեղ հեղեղանման անձրև գալ և առաւ 24-ին և 25-ին նոյն ամբ ձիւն եկաւ. Դեռ ծառերը կանաչ էին և ձիւնը նոսեց նրանց վրա և չատ վնաս տուեց այգիներին, ջարդելով ծառերի ճիւղերը. Այդ վնասի պատճառով, ինչպէս կարծում է Թղթակիցը, միւս տարի մրգեղէնի բերքը չատ սակաւ կը լինի. Կազդուրանի բնակիչների մեծ մասը պարապում են այգեգործութեամբ, իսկ վաճառականութեամբ պարապում են միայն եկողները և ոչ թէ բնիկ հայերը:

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են, որ պ. Ա. Անանով ի յիշատակ իր հանգուցեալ որդու Նուբերից Քութայիսի ծխական հայոց դպրոցին 500 րուբլ. Մեր Թղթակիցը մեզ գրում է որ Քութայիսում չատ ցուրտ է անում այժմ, շրջակայ սարերի վրա ձիւն է գալիս, իսկ քաղաքում հինգ օր չարունակ անձրև է գալիս. Մթերքների գները բարձրացան:

—

Ֆրանսիական օպէրէտային խումբը այսօր, չորեքշաբթի օր, ներկայացումն կը տայ Արծրունու թատրօնում. Թատրօնը թէև լի չէ լինում այդ ներկայացումներին, բայց մեծ մասամբ գալիս է թատրօն Թիֆլիսի այլ և այլ ազգութիւններին պատկանող ամենաընտիր հասարակութիւնը. Ֆրանսիական խմբի ներկայացումները մեծ զուարճութիւն են պատճառում հանդիսականներին:

—

ՉԻՐԱՑԵԼԻՑ մեզ գրում են. «Հասարակ գիւղը իր շրջակայ տաս հատ փոքրիկ գիւղերով, 500 ծխից բազկացած, մի չատ յարմար կենտրոն է ուսումնարանի համար. Կլիման ամեն կողմից գեղեցիկ է այստեղ և առողջարար. Բայց 500 տուներից բազկացած հայ ազգաբնակութիւնից միայն 50 աշակերտ կայ մեր դպրոցում, մնացած մանուկները պարապ թափառում են գիւղերի փողոցներում. Աղքատութիւնը և տգիտութիւնը պատճառ են անտարբերութեան դէպի ուսումը. Իսկ աղքատութեան պատճառը հողաբաժնի պակասութիւնն է և մարդկանց պարապութիւնը.»

—

Մեզ խնդրում են տալ հետեւեալը. «Այն մեծապատիւ պարոններին և արժանապատիւ հայրերին, որոնց մօտ գանվում է «Նկարն գոկտոր Ամիրիկացու խորհրդածութիւններ» գրքից, խնդրում եմ աշխատեն վճառել և գրամները հասցնեն ինձ հետեւեալ հասցէով. Тифлисъ, священнику Григору Мандакуни, на Авлабарской Метехской улицѣ.»

—

Ուրիշ նամակի մը մէջ կը կարդանք. «Սեպտեմբ. 16-ին անպատիւ կերպով աշակերտները դուրս հանուեցան, գրեթէ վռնտուեցան, առանց գոնէ անունց մի երկու խօսք ընելու. առանց գոնէ խրատ տալու աշակերտաց որ դպրոցը գոցուելէ վերջը իրենց ժամերը պարապ չանցնեն.—Սեպտ. 20 և 27-ին վարժապետանոցի դռները աճապարդի հանեցին անարգաբար. Ցեղացի վարժապետները, որ վարժապետանոցի առջի օրերը տեսած էին, աշակերտները որ չորս տարի առաջ ուրախութեամբ այդ յարկը մտած և այդ գրասեղաններու վրայ կը մեծնային, ամենքն ալ ահաւոր էին և կուլային, չենք կարող նկարագրել այդ տեսարանը.»—

Դարձեալ ուրիշ նամակի մը մէջ կը կարդանք գիշերօթիկ աշակերտաց մասին (այս գիշերօթիկները Արարատեան ընկերութիւնը վանայ շրջակայ գիւղերէն ժողոված էր, գալ տարի դասատու պիտի ըլլային, և մինչև այ Տիգրանակերտէն բերել տուած էր Արարատեանը). «Անդրէաս, Շահէն, և Խրօեան իրենց տեղերը վերադարձած են. Այս վերջինը առաւօտը դեռ ոչինչ կերած, առանց հետը հաց առնելու լալով մեկնած է սերբանդակին հետ մինչև Ալիբ անօթի քալելով (Ալգետանէն Ալիբ 6 ժամ է) —իսկ Տիգրանը հիւանդացած է, բոլորովին անխնամ թողուած. Ինքը Սարգիսեանէն բժիշկ մը բերել խնդրած էր, բայց այս վերջինը մերժողական պատասխան տուած էր. Ծախք ընենք քեզի բժիշկ մ'ալ բերենք.— Սենեկի մը մէջ դրած են. ոչ լոյս կայ, ոչ մոքուր օդ, այն ապականած սենեկին մէջ, զոր մինաէրի մը վրայ ձգած են, լաւ է որ կապրի.»—

Ահա այսպէս սարքերով աշխատելու է, առանց արդիւնքներ ձեռք բերելու համար. Մխիթարական կէտ մը կայ. երբ առաջին անգամ վարժապետանոցը Արարատեան ընկերութիւնը բանալ կուզէր վանայ մէջ, ազգային իշխանութեան կողմէ ընդդիմադրութիւն կար, և ոչ իսկ կուզէին ծանուցում ընել եկեղեցին, իսկ այսօր բոլորովին փոխուած, ժողովուրդը կը յուզի, կուզէ որչափ որ կրնայ դրամական օգնութիւն ընել որ վարժապետանոցը կանգուն

Fonds A.R.A.M

Լսում ենք որ Թիֆլիսի վրաց թատրոնական խումբը կրկին անցնելու է Արծրունու թատրոն, այդտեղ իր ներկայացումները շարունակելու համար։

—

Երեանում հրատարակվող «Պահակ» լրագրում, հոկտեմբերի 23-ի համարի մէջ, կարդում ենք հետևեալ հեռագիրը Էջմիածնից ստացած և տպագրված Մոկսիան Գէորգեանի անունով «Երէկ երեկոյեան ժամը եօթին, եղբօրս Բարդուղիմէոս վարդապետի վրա տաս հոգի թուրանդչի յարձակվելով, ձեռները կապել են և բարբարոս կերպով թակելով, տարան, ասում են, Խոմիրզապ։ Այդ հրէշաւոր անցքի մասին, մենք էլ ստացանք մի քանի թղթակցութիւններ, որ կաչխատենք հրատարակել «Մշակի» հետևեալ համարներից մինում։

—

Ասում են որ Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանի պատժելու պատճառն այն էր, որ այդ վարդապետը խիստ բողոքներ է գրել էջմիածնում գործվող զեղծումների դէմ և աներկիւղ կերպով իր առարքութեամբ ներկայացրել է այդ բողոքները վեհափառին, Սինոդին և պրոկուրօրին։ Այդ բողոքներից մինը տպված է «Պահակի» մէջ, նոյնպէս ուղարկված է մեր խմբագրութեանը, մեր լրագրի էջերում տպագրվելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Իշխան Բիսմարկ այն գործիչներից չէ, որոնց յուսահատեցնում է առաջին պատահած անաջողութիւնը։ Նա գիտէ օգտվել գործերի ամենաանյարմար դրութիւնից և հաստատ պահպանում է մի անգամ իր մըտածած պրօգրամը, ինչպէս և լինեն շրջապատող քաղաքական պայմանները։ Ընտրութիւնները, որոնց պատճառով կառավարութիւնը այդչափ մեծ ծախսեր արաւ, պետական կանոնների ներքին քաղաքականութեան համար տեսակ հեռանքներ ունեցան։ Ցանկացած կառավարչական մեծամասնութիւն, իրիմեան գլուխ կը կանգնի տեղական ուժերով աշխատելու. փորձուզալանին կը հետագրէն որ երէկ իրենց հետ գործէ։— Այս երևոյթը բաւական է ցոյց տալ թէ ինչ աստիճան օգտակար էֆեդալական ուժեր պատրաստել, և Վարաուեան ընկերութիւնը, որ այդ ուժերը պատրաստել իրեն նպատակ ունէր, բաւական յաջողած է վանայ մէջ։— Իրիմեան գրքոյկ, վանեցիք և կ. Պոլսէն անունք որ վարժապետանոցի շարունակութիւնը կը փափագին, փութալու պէտք ալ ունին։—

Եթէ կ. Պոլսէն ամենք զանազան իմաստակական պատճառաբանութեամբք կուզեն որ հայ ազգը վանի վրայ ուշադրութիւն չը դարձնէ, օտարականք մեզմէ լաւ հասկցած են թէ նոքա որքան կուզեն հայ ազգին մէջ գործ տեսնել, պէտք է վանեցւոց դաստիարակութիւնը իրենք ստանձնեն։— Ձիզուիթներն արդէն վան հասած են և հոն կուզեն մեծագոյն գործել. դրամ ունեն, պաշտպանութիւն ունեն, զօրութիւն ունեն։— Մեծ վարժարան մը բանալու կաշխատին, և մեր վարժապետանոցի փակումովը իրենց գործը շատ կը դիւրանայ։ Արդէն ամերիկացի միսիոնարք ալ երկար ատեն է վան են և անոնք ալ կարողութեան տէր մարդեր են։ Ներկայիս է մեզ անտարբեր կենալ և թողուլ որ Հայաստանի սրտին մէջ օտարազգիները կրթեն մեր ապագայ սերունդը. ինչ բարձր կրթութիւն ալ տան, անշուշտ ազգային ոգւով չէ, և միթէ մենք կարող չենք ուժերնիս միացնելով այդ կրթութիւնը մենք տանք, և մեր ազգի ապագան մենք մեր ձեռքով պատրաստենք և չէ թէ թողունք օտարներուն։ Այս կէտին վրայ ուշադրութիւն ընելու ենք, ուրիշ նամակ մը թերևս յիշեցնենք թէ ինչ էր վարժապետանոցի կաչումը և թէ ներկայիս է հայ ազգին որ թող տայ այդ հաստատութեան աւերակաց վրայ օտարականք չենք բարձրացնեն։—

Հայաստանի բարեկարգութեանց խնդրոյն վրայ շարունակ տարաձայնութիւններ կան, բայց ոչինչ իրական։ «Ֆառ» կը հաղորդէր թէ գանձային բարեկարգութեանց խնդրէն վերջը պիտի դայ Հայաստանի բարեկարգութեանց հարցը։— «Մասիս» կրսէ թէ քօմիսէր մը Հայաստան խրկելու առաջարկը հաստատ կը մնայ դեռ, քօմիսէրն քրիստոնեայ ընկեր մը տալու պայմանաւ։ Եւրոպայէն կը հաղորդեն թէ Անգղիա վերստին եւրոպական ակրութեանց աշխատութիւնը այս հարցին վրայ պիտի հրաւիրէ. այս անգամ դիտողութեան կէտ մը կայ, սա է թէ այժմ փոքր-Ասիոյ քրիստոնեայ իւլամ ժողովրդոց վիճակի բարւոքման վրայ է խօսքը։ —Բայց մեր առած տեղեկութիւնները, զոր նախապէս ալ հաղորդած ենք, ասկայն սխալ ըլլալուն նշան մը չը տեսանք դժբաղդաբար։ —Այս ձմեռ բան մը պիտի չըլլայ։—

Եթէ տէրութիւնք մեզի համար բան մը չընեն, մենք մեզի ընելիք ունենք, քանդելու ամիսներ են։—Պատրիարքական առձնագար։—Իրաւցնէ մեր լրագիրներուն մէջ յայտնի որոշ բան մը չը տեսնուիր, բայց այս տեղի գործերուն լեզուէն հասկցողները դիւրաւ կը նշմարեն, որ պատրիարքը հրաժարեցնելու ջանքերը վերստին սկսած են, և այս անգամ յաջողութեան բաւական վստահութիւն ունենալով։—Ազգային ժողովին մէջ պատրիարքի հակառակորդաց թիւը կը տառապանայ, և շատերը որ ի նպաստ պատրիարքի քուէ կուտան, չուզելով է, ժողովուրդէն կը վախնան։— Պատրիարքին բարեկամաց և հակառակորդաց գլխաւորներուն ոմանց հետ այս նիւթին վրայ տեսակցեցանք, առաջիններէն շատ վշտացած կը տեսնենք, իսկ միւսները այնպէս կը կարծեն թէ պատրիարքի անկումը շատ չուշանար, քանի մը շաբաթուան խօսք է կըսեն։—Բաւ մը, զոր երկար տեսեր է մոռցած էինք, սկսանք ազգային երեսփոխանաց ոմանց բերնէն լսել—պատրիարքեան ե՞ս, թէ հակապատրիարքեան։

Հայ ժողովուրդը Ներսէս սրբազանի կողմնակից է, ուստի ժողովրդի սէրը պակսեցնելու աշխատելու է, և ասոր համար պատրիարքին ուղնեցած թերութիւնները, գործած փոքր ինչ սխալները խոշորացոյցով ժողովուրդին սկսած են ցոյց տալ։

Պատրիարքին հակառակորդք մասամբ նախանձառներ են, մասամբ բարեմիտներ են որք կը կարծեն թէ պատրիարքին հեռանալը գործոց դըրութեան վերաքննութիւնը այդ ընտրութիւնը կատարելապէս կանոնաւոր չեն։

Հոկտեմբերի 31-ի նիստին պատգամաւորների ժողովը շարունակում էր պատգամաւորների ընտրութեան վերաքննութիւնը։ Գամբետտայի ընտրութիւնը հաստատվեցաւ, որովհետև նրա դէմ բողոքը ստորագրված չէր։ Այնուհետև նախագահը յայտնեց, որ Ցօնի Բէվիլիօն մտադիր է խօսել Գամբետտայի ընտրութեան մասին։ Ցիշեալ պատգամաւորը ասեց մօտաւորապէս հետևեալը. «Իմ պատասխանութիւնն է յայտնել կարծիքս, բայց խոստանում եմ շափաւոր լինել։ Պաշտօնական կանդիդատութեան նշանաւոր դեր էր կատարում Գամբետտայի ընտրութեան ժամանակ։ Ընտրողական ժողովի ժամանակ թաղապետը նրա կողքին էր կանգնած։ Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ պաշտօնական ձնշումն։ Քուէարկութեան ժամանակ պոլիցիականները հետապրին հաստատութեանը դահլիճից և ձայների հաշվելը փակված սենեակի մէջ կատարվեցաւ։ Բայց ես կը թողնեմ այդ փաստերը և կը խօսեմ գլխաւորապէս նրանց բարոյական նշանակութեան մասին։ Այժմեան ընտրութիւնների ժամանակ դէմ առ դէմ կանգնեցան Հանրապետական երկու տեսակ քաղաքականութիւններ։ Միապետական ծագում ունեցող Հանրապետական քաղաքականութիւն, որ յարձակողական բնաւորութիւն ունէր՝ դա իմ հակառակորդի քաղաքականութիւնն էր, և ազատ քաղաքականութիւն։ Մենք միայն վերջին քաղաքականութիւնն ենք ճանաչում, որ մտցրած է Բելվիլի նախագծի մէջ 1869 թուականին և որից հրաժարվեցաւ նրա հեղինակը։ Միայն այդ նախագծին հաւատարիմ, մենք ընդունեցինք Գամբետտայի կանդիդատութիւնը։ Մեր ժողովների ժամանակ ոչ ոք այդ

ՖՐԱՆՍԻԱ

—

Պատգամաւորների ժողովի անդամների թիւը համարվում է 557, բայց իսկապէս ներկայումս միայն 540 անդամներ կան, որովհետև նրանցից մի քանիսը ընտրված են մի անգամից մի քանի նահանգներում։ Ժամանակաւոր նախագահի ընտրութեան ընթացքում 176 պատգամաւորներ չէին մասնակցում։ 176 պատգամաւորներ։ «Հավասի» ընկերութեան տեղեկութիւնների համեմատ նոր ժնիսատութեան մէջ կան 84 կողմնակից Ֆինանսների, իսկ Ֆրէյսինէ պատերազմական մինիստրի պաշտօնը, Ժիւլ Ֆերրի գործել ժողովրդական լաւատեսութեան մինիստր կը լինի։ Բրիսօն ատիպված կը լինի բաւականանալ պատգամաւորների ժողովի նախագահի պաշտօնով։ Ասում են, որ Գամբետտա նոր մինիստրութիւնը կազմելուց յետոյ ժամանակաւորապէս կը դադարեցնէ պատգամաւորների ժողովի նստաշրջանները, որպէս զի ժամանակ տայ իր կառավարութեանը գործերի դրութեան հետ լաւ ծանօթանալու համար։ Գամբետտա բոլորովին չի նախագահի պատգամաւորների ժողովի նիստերին, որպէս զի ցոյց տայ, թէ ինքը պատրաստվում է մինիստրութիւն կազմակերպել։ Մանաւանդ, որ ինքն յանձնված էր Գամբետտայի ընտրութեան վերաքննութիւնը այդ ընտրութիւնը կատարելապէս կանոնաւոր յայտնեց։

Հոկտեմբերի 31-ի նիստին պատգամաւորների ժողովը շարունակում էր պատգամաւորների ընտրութեան վերաքննութիւնը։ Գամբետտայի ընտրութիւնը հաստատվեցաւ, որովհետև նրա դէմ բողոքը ստորագրված չէր։ Այնուհետև նախագահը յայտնեց, որ Ցօնի Բէվիլիօն մտադիր է խօսել Գամբետտայի ընտրութեան մասին։ Ցիշեալ պատգամաւորը ասեց մօտաւորապէս հետևեալը. «Իմ պատասխանութիւնն է յայտնել կարծիքս, բայց խոստանում եմ շափաւոր լինել։ Պաշտօնական կանդիդատութեան նշանաւոր դեր էր կատարում Գամբետտայի ընտրութեան ժամանակ։ Ընտրողական ժողովի ժամանակ թաղապետը նրա կողքին էր կանգնած։ Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ պաշտօնական ձնշումն։ Քուէարկութեան ժամանակ պոլիցիականները հետապրին հաստատութեանը դահլիճից և ձայների հաշվելը փակված սենեակի մէջ կատարվեցաւ։ Բայց ես կը թողնեմ այդ փաստերը և կը խօսեմ գլխաւորապէս նրանց բարոյական նշանակութեան մասին։ Այժմեան ընտրութիւնների ժամանակ դէմ առ դէմ կանգնեցան Հանրապետական երկու տեսակ քաղաքականութիւններ։ Միապետական ծագում ունեցող Հանրապետական քաղաքականութիւն, որ յարձակողական բնաւորութիւն ունէր՝ դա իմ հակառակորդի քաղաքականութիւնն էր, և ազատ քաղաքականութիւն։ Մենք միայն վերջին քաղաքականութիւնն ենք ճանաչում, որ մտցրած է Բելվիլի նախագծի մէջ 1869 թուականին և որից հրաժարվեցաւ նրա հեղինակը։ Միայն այդ նախագծին հաւատարիմ, մենք ընդունեցինք Գամբետտայի կանդիդատութիւնը։ Մեր ժողովների ժամանակ ոչ ոք այդ

ես կերայ ազգին սառնները, ես փակեցի վարժապետանոցը, ես ծախեցի ժողովուրդը. ամեն ոճիր ես գործեցի, ես այսպէս պատրիարք եմ, եթէ կուզէք կը մնամ, եթէ չէք ուզեր կը հրաժարիմ։—Ժողովրդեան մէջ յուզման ցոյցեր, բարկութեան նշաններ, պ. փափազեան կը յայտարարէ թէ ինքն իշխանական ոգւով չէ որ հարցում կընէ, բայց պատրիարքն ալ այս կերպով պէտք չէ պատասխանէ։ Փափազեան կուզէ մխիթարել, պատրիարքը կը կանչէ ետևէն, որ եկաւ նրա տեղ, եթէ վատ չեմ, եկաւ պատասխաններս մոխիրը։ Փափազեան կուզայ կը նստի քիչ մը և կերթայ. երեսփոխանք ոմանք կը սկսին կամաց կամաց իրարու զգնել ձեռքի առակ, դպրոցի աղոց պէս. ժողովքը ալեկոծեալ, վատահութիւն մը կը յայտնէ պատրիարքին, պատրիարքը կը մխիթարի, ժողովքը կը ցրուի, վաս ապատարութիւն մը կը մնայ։

Պատրիարք սրբազանին թերութիւնը այն է որ ինքզինքը չը կրնար զսպել շատ անգամ. ժողովի մը գլուխ եղողը, ժողովքի մը կառավարողը իր անձին սէրը ըլլալու է, և շատ համբերութիւն ունենալու է։ Պատրիարքը չը կրնար ազգային ժողովքէն անցնիլ, չը կրնար զայն արհամարհել, որովհետև իր իշխանութիւնը այդ ժողովքէն առած է, և ամենաճամր պարագայներու մէջ «ժողովքին կամքը, որ ազգին կամքն է, այս է,» ըսելով գործ տեսած է, ուստի այդ ժողովքի հետ վարուելու է։ Անոնց ժողովքի մէջ բարեկամ ալ, թշնամի ալ կը գտնուի։ Բայց միւս կողմէ պատրիարքն ալ ժողովական վիճակի մէջ պէտք չէ նկատենք և պէտք է գիտնք թէ որքան տարիներ են կաշխատի, ամեն կողմէ խոչընդոտներու, գեղապատաց կողմէ անտարբերութեան դէմ. դրամ չը կայ, պատրիարքարանի արձանութիւնը խեղճ, և առանց մարդու, առանց գրաստի, առաց մեծ աջակիցներու աւելի ինչ կարող էր ընել, հիւանդ, ակար անձ մը։

Հայկակ

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՆԱՄԱԿ ՓԻԼԻՓՓՈՍԵՑՈՒՆ

Ի. Փիլիպպոսեան. 20 հատոր. Լոնդոն և Պետերբուրգ. Ա. Ֆ. Մարքս. 1881-ի տասներորդ հատորը, որ «Նոր տարուան պատկառելի նուէր» է կոչում ինքնին, ամենայն իրաւամբ կարող է այդ անունը կրել։ Ամենայն ինչ, որ ընդհանրապէս կարելի է ասել այդ հատորի մասին, ասուած է արդէն նախորդ հատորների մասին։ Ամենայն ինչ, որ կարելի է գովել այդ հատորի մասին, գովուած է արդէն նախորդ հատորների մասին։ Ամենայն ինչ, որ կարելի է ասել այդ հատորի մասին, ասելի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԼԻԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. Մեր բարեբարեկամներ, կօնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թեասեր, երես լուսնալու ամաններ, չայնիկներ, ԹԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (сухая), մանուշականեր, ԿՈՂՊԿԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԼՎՕԼՎԵՐՆԵՐ, պլօմբներ, ՄԱՀԱՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԴՈՒՍՏ, պրիկօ, պատկա, գուլպաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խաթեր, կօնեակ և այլն թէժ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻԱՄԲ ՎԱՃԱՌՈՒԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՈՒԴՐ 44 ք., 46 ք., 48 ք., 50 ք., 52 ք., 54 ք., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼ ԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐՆԻՑ մանգնգիա, խոտոր ՅԱՐԱԻԻ գէմ, ԽԻՆԱՑԻ դինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վասերկլօզեմի համար, պարսկական փոշի։

97—100

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ կրակի դէմ ապահովում է շինութիւններ, ապրանքներ, պահեստներ, գործատուններ, դիւզական շինութիւններ և մշակների կովկասի համար գործակատար Ա. Ա. ԲԵԺԱՆԲԵԿ։ Գրասենեակը գտնվում է Երևանեան հրապարակի վրա քաղաքային տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երեկոյեան 6—8 ամեն օր։ ՓՈԽ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ. Քութայիսում Հ. Գ. ԲՀԺԱՆԲԵԿ, փոթի ի. գ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա Գ. ՋԱՔԱԼԲԱՇԵՎ։ Նոյն տեղը ապահովում են ներքին 5% առաջին և երկրորդ փոխադրութեան ՏՈՄՍԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետերբուրգի ի. վ. ԻՒՆԿԵՐ բանկային տան յանձնարարութեամբ։ (Հ. 2.)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Հայոց ուսուցիչներաց ծրագրի միութեան տարին վախց է, որ գրազեցնում է մեր ուսուցիչների վարչութիւններին և ուսուցիչներին. բայց և այնպէս ցայսօր գնա չէ կազմված և հոգևոր իշխանութիւնից չէ վաւերացրած մի այնպիսի ծրագիր, որին պատասխանված լինէին հետևելու մեր ուսուցիչները։

Սրանից առաջ եկած բոլոր անյարմարութիւնները ի նկատի առնելով, Էջմիածնի Գէորգեան ճեմարանի ուսուցչական խորհուրդը որոշեց քննութեան առնել ճեմարանի ծրագիրը և կազմել մի այնպիսին, որ ընդհանուր գծագրութեամբ յարմար լինէր մեր բոլոր ուսուցիչներին։

Որպէս զի այս ծանր գործը կատարեալ յաջողութիւն ունենայ, հարկաւոր է մեր ազգային ուսուցիչաց ուսուցչական խորհուրդներին և առհասարակ մեր ազգային լուսաւորութեան նպաստող մեր ազգային լուսաւորութեան խնդրով զբաղվողների կարծիքները և ցանկութիւնները իմանալ։

Ուստի ի կողմանէ ճեմարանի խորհրդի պատիւ ունիմ դիմելու մեր բոլոր ուսուցիչաց ուսուցչական խորհուրդներին և ազգային լուսաւորութեան նպաստաւոր անձանց, խնդրելով մինչև առաջիկայ յունվարի 1-ը բարեհաճել ուղարկել յանուն ճեմարանի կամ պատասխատ ծրագիրներ և կամ յայտնել իւրեանց հայեացքները և պահանջները ազգային ուսուցչարանից։

Ցաջայոյս եմ, որ ճեմարանիս խորհրդի առաջարկութիւնը սիրով կընդունվի և օգնութեամբ ազգային լուսաւորութեան առաքելութեամբ բոլոր գործող անձանց միջոց կը առանձք լրացնելու մեր բոլոր ուսուցչարանաց փափագը։

Տեսուչ ճեմարանի Ա. Նահապետեան

1881 թ. 24 հոկտեմբերի

Ս. Էջմիածին 1—1

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—11 ժամը։

Ամենայն օր թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հետևեալ բժիշկները.

